Ազգ

Azg
armenian daily

29 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003 ՇԱԲԱԹ 197(2882)

Ցորենի գների աճ հացահատիկի միջազգային շուկաներում

ՊՈՒԱՏԻԵ (ԱՐԵՎՄՏՅԱՆ ՖՐԱՆՍԻԱ), 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Եվրոպայի հացահատիկային շուկայում կտրուկ աճել են ցորենի գները: Ուժեղանում է նաեւ կերի հացահատիկի պահանջարկը, քանի որ Եվրոպայում եգիպտացորենի ներկայիս բերքն արտասովոր փոքր էր. 25 տոկոսով պակաս, քան անցյալ տարի:

Դրա հետ մեկտեղ արտադրողները ծգծգում են ցորենի մատակարարումները շուկա՝ սպասելով գների հետագա աճի: Դրա հետեւանքով Փարիզի հացահատիկային շուկայում ցորենի գներն ուրբաթ օրվա համեմատությամբ ավելացել են երկու եվրոյով, եւ այժմ մեկ տոննա ցորենն այստեղ արժե 143,75 եվրո: Միաժամանակ ցորենի գներն աճում են Չիկագոյի խոշորագույն ապրանքային սակարանում, որտեղ գները հասել են երկամսյա բարձրակետային ցուցանիշների: Ինչպես հաղորդում են իրազեկ գործարար աղբյուրները, Չիկագոյի վաճառամիջնորդները հացաբույսերի խոշոր պտվերներ են սպասում Չինաստանից:

Զուրն օգտագործել միայն տեխնիկական նպատակներով՝ գոնե այս 2-3 օրը

Անվճար հետազոտություններ տուժած համայնքների բնակիչների համար

Արաբկիրի համայնքը սնող ջրատարների աղտոտումը հողի մասնիկներով հագեցած անձրեւաջրերով, շարունակում է լարված վիճակում պահել ե՛ւ Արաբկիրի, ե՛ւ Կենտրոն համայնքի բնակչությանը: Մայրաքաղաքի հակահամաճարակային ծառայությունները եւ պոլիկլինիկաները համատեղ բակային համայքեր են կատարում՝ ոչ միայն ախտի ու վարակի դեպքերը կանխելու կամ հայտնաբերելու, այլեւ իրազեկելու բնակչությանը, որ 2 համայնքների բնակիչներն այս օրերին ինքնազգացողության վատացման կամ ցանկացած առողջապահական խնդրով կարող են դիմել տեղամասային պոլիկլինիկաներ եւ անվճար հետազոտվել ու հարկ եղած դեղորում բուժօգնություն ստանալ:

Ըստ քաղաքապետարանի առողջապահության եւ սոցիալական աջակցության վարչության պետ Արմեն Սողոյանի, երեկ կեսօրվա դրությամբ ինֆեկցիոն հիվանդության ոչ մի դեպք չի գրանցվել եւ համաճարակի ոչ մի վտանգ չկա: Այժմ 2 համայնքներին մատակարարվում է գերքլորացված ջուր, եւ բժիշկները խորհուրդ են տալիս օգտագործել բացառապես տեխնիկական նպատակներով՝ գոնե այս 2-3 օրը:

Երեւանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ մամուլի պատասխանատու Մուրադ Սարգսյանը տեղեկացրեց, որ երեկ, ժամը 16-ին վթարի հետեւանքներն արդեն վերացվել էին, եւ ջրամատակարարման ցանցն ամբողջությամբ ախտահանվել է:

Տես էջ 2

ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԹԲԻԼԻՍԻՑ

Նոյեմբերի 2-ին խորհրդարանական ընտրություններ Վրաստանում

Ով ով է. կուսակցություններ, քաղաքական դեմքեր

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ
Թբիլիսի

Այս կիրակի Վրաստանում տեղի կունենան խորհրդարանական ընտրություններ, որոնց մասնակցում են քաղաքական 21 միավորումներ: Քաղաքական վերլուծաբանների կանխատեսումներով՝ խորհրդարան անցնելու 7 տոկոսանոց արգելքը կարող են հաղթահարել ութ կուսակցություններ եւ միավորումներ:

Վրաստանի նոր խորհրդարանը ունենալու է 235 պատգամավոր, որոնցից 150-ը պետք է ընտրվեն համամասնական, 85-ը՝ մեծամասնական ընտրակարգով:

Ներկայացնենք ութ կուսակցություններին եւ միավորումներին, որոնք հնարավորություն ունեն հաղթահարելու 7 տոկոսանոց արգելքը:

«Հանուն նոր Վրաստանի» դաշինքը, որի անդամատոն ղեկավարը երկրի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն է, գլխավորում է Վրաստանի նախկին պետնախարար (վարչապետ) եւ Մոսկվայում Վրաստանի նախկին դեսպան Վաժա Լորդիփանիձեն: Դաշինքին մաս են կազմել տարբեր քաղաքական կողմնորոշումներ ունեցող մի շարք կուսակցություններ, որոնց թվում են սոցիալիստները (ղեկավար՝ Վախթանգ Ռչեուլիշվիլի), ազգային ժողովրդավարները (Իրինա Սարիշվիլի), ծայրահեղ ազգայնական Գուրամ Շարաձեի «Վրաստանն առաջին հերթին՝ հավատ, լեզու, հայրենիք» քաղաքական միավորումը, Աբխազիայի ազատագրման կուսակցությունը եւ այլք: Թեեւ ժողովրդի շրջանում կառավարամետ այս դաշինքը լուրջ հեղինակություն չի վայելում, նրա առաջնորդները եւ նախագահ Շեւարդնաձեն հայտարարում են իրենց հաղթանակի մասին: Դաշինքի հավանական ընտրողներն են երկրում բնակվող ադրբեջանցիները (կազմում են բնակչության ավելի քան 6 տոկոսը), Աբխազիայի փախստականները, ուժային կառույցները, պետական մեքենան: Կառավարամետ այս դաշինքում երկրի բնակչության մոտ 6 տոկոս կազմող հայությունը ներկայացված է ոչ պատշաճ կերպով. ցուցակում Առնոլդ Ստեփանյանը 54-րդ տեղում է, Գիվի Շուգարովը՝ 60-րդ, Ալեքսանդր Մովսիսյանը՝ 108-րդ:

Տես էջ 5

Երեւանում ջեռուցման սակագինը 1 քմ-ի համար 1870 դրամ է

ԵՐԵՎԱՆ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Երեւան քաղաքում կենտրոնացված ջերմամատակարարման դիմաց «Ջերմային տնտեսություն» ՊՓԲԸ-ի կրեդիտորական պարտքերը այս տարվա հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմել են 6921 մլն դրամ, որից 3851 մլն դրամը՝ «ՀայՈւսգազարդ» ՓԲԸ-ին, 2532 մլն դրամը՝ «Հայգազարդ» ՓԲԸ-ին, 165,5 մլն դրամը՝ «Հայաստանի էլցանցեր» ՓԲԸ-ին, իսկ ջրի դիմաց՝ 233 մլն դրամ: Այս մասին հայտարարվել է հոկտեմբերի 28-ին ՀՀ տարածային կառավարման եւ ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար Հովիկ Աբրահամյանի մոտ տեղի ունեցած խորհրդակցությունում, որը նվիրված էր 2003-2004թթ. ձմռան նախապատրաստական աշխատանքներին:

Ինչպես հայտնեցին ՀՀ կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, խորհրդակցությունում նշվել է նաեւ, որ ընթացիկ տարվա ջեռուցման համար մայրաքաղաքում, ՀՀ բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի ննջարկումների արդյունքում, 1 քմ բնակելի մակերեսի ջեռուցման սակագինը հաշվարկվել է 1870 դրամ (մոտ 3,3 ԱՄՆ դոլար):

Հայագրոբանկն ազատում է իր աշխատակիցներին

Նախորդ օրը բանկի խորհրդի նիստում կայացված ինքնալուծարման որոշումից հետո, երեկ Հայագրոբանկն ազատեց իր աշխատակիցներին, որոնց թիվը Երեւանում եւ մարզերում անցնում է 700-ից: Առայժմ հայտնի չէ, թե ինչու է Հայաստանում ավելի քան 30 մասնաճյուղեր եւ ավանդները վերադարձնելու հնարավորություն ունեցող Հայագրոբանկը (բաժնետերերի խորհրդի նախագահ՝ Աժ պատգամավոր Հակոբ Հակոբյան (ճոյս), տնօրեն՝ Զորիկ Ավետիսյան) ինքնալուծարման քայլին դիմում: Համենայն դեպս, նման քայլը ենթադրել է տալիս, որ շուտով ՀՀ կենտրոնական բանկը պետք է հետ վերցնի բանկի արտոնագիրը: Հիշեցնենք, որ Ագրոբանկը վերջին օրերին սկսել էր ավանդատուներին վերադարձնել իրենց ավանդները:

Շեւարդնաձե. Հայերը արժանավոր քաղաքացիներ են

ԹԲԻԼԻՍԻ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: «Մեր հայրենակիցները, Ջավախքի հայերը, էնտուզիազմով ընդունեցին ինչպես Թբիլիսիի պետհամալսարանի մասնաճյուղի բացումը, այնպես էլ տարածաշրջանում պետական լեզվի ուսումնասիրման ծրագրերի իրականացումը», երկուշաբթի Ազգային ռադիոյի եթերում հայտարարել է Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն, մեկնաբանելով իր կիրակնօրյա ուղեւորությունը այդ հայաբնակ տարածաշրջան: Նա առանձնահատուկ նշել է Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի մասնաճյուղի բացումը Ախալքալաքում: Նախագահը երախտագիտություն է հայտնել լեզվաբանների խմբին, որոնք տեղի բնակչության համար պատրաստել են վրացերենի դասագիրք, եւ հայտարարել, որ «բնակչության հետաքրքրությունն ու էնտուզիազմը գերազանցեցին բոլոր սպասելիքները»: «Ռեգնում» գործակալության համաձայն, Շեւարդնաձեն ընդգծել է, որ «դա մի անգամ եւս հաստատում է, որ մեր հայ հայրենակիցները արժանավոր քաղաքացիներն են մեր ընդհանուր հայրենիքի, իսկ պետական լեզվի իմացությունը անպատճառ կօգնի նրանց հետագա քաղաքացիական ինտեգրացման եւ պետության շինարարության ու կառավարման գործընթացին ավելի ակտիվ մասնակցություն ունենալու հարցում՝ իհարկե, ազգային ինքնատիպության, մայրենի լեզվի եւ մշակույթի պահպանման եւ զարգացման պայմաններում»:

ԹՈՒՐՔԸ ԲՈՒԺՎԵԼ Է ԵՐԵՎԱՆՈՒՄ

Թուրքիայում բացվել է «Արմենիկում» կենտրոնի ներկայացուցչություն

Վերջին շրջանում «Արմենիկում» կենտրոնը կարծես մոռացության է մատնվել: Հայաստանյան մամուլը գրեթե չի անդրադառնում նրա գործունեությանը: Սակայն դա ամենեւին չի նշանակում կենտրոնի նշանակության նվազում: Ընդհակառակը, «Արմենիկումի» նշանակությունն աճում է, դեռ ավելին՝ հայկական այս կենտրոնն իր ներկայացուցչությունն է բացում Թուրքիայում:

Այդ մասին հոկտեմբերի 10-ի համարում տեղեկացնում է Պոլսում հրատարակվող «Ակօս» շաբաթաթերթը: Ըստ տեղեկության, Ստամբուլում «Արմենիկում» կենտրոնի ներկայացուցչի պարտականությունն ստանձնել է մեր հայրենակից Մաժաք Օհանյանը: Նա, ապա նաեւ՝ Ստամբուլի համալսարանի դասաբժշկական փորձաքննության ամբիոնի պրոֆ. Վեջդեթ Օզը եղել են Հայաստանում: Վերջինս վերադառնալով Թուրքիա, հրատարակել է համապատասխան մի հոդված, որտեղ մասնավորապես գրում է. «ԴԱՎ-ով վարակված հիվանդների օրգանիզմում վիրուսների արագ նվազումը 1-2 ամսվա պես կարճ ժամանակահատվածն ինձ չափազանց հետաքրքրեց: Հայ գիտնականների հետ մեր հանդիպումները շարունակվում են: Ամեն ինչ անում ենք, որ նրանց նվաճումներից օգտվեն նաեւ մեր երկրում»:

Ի դեպ, «Արմենիկում» դեղամիջոցի բուժիչ հատկությունն ընդունել է նաեւ ԴԱՎ-ի դեմ պայքարի թուրքական միությունը: Ավելին՝ դրա առնչությամբ հետեւյալ բովանդակությամբ գրավոր հայտարարություն է արել. «Այդ մեջ վիրուսի բացակայությունը դեռեւս բջիջներում դրա բացակայության երաշխիք չէ: Վերջնական եզրակացության հանգելու համար առայժմ վաղ է խոսելը, բայց եւ այնպես, գտնում ենք, որ դեղամիջոցի հետ կապված զարգացումների եւ դրանց արդյունքների ուսումնասիրությունը խիստ օգտակար է լինելու»:

Այդ ընթացքում Երեւանում բուժում է ստացել ոման Ա. Բ-ն, որը 1997-ին վարակվել է ԴԱՎ-ով, իսկ 2001-ին դիմել է Ստամբուլի «Զափա» հիվանդանոց, որտեղ էլ նրան պատասխանել են, որ բուժման համար արդեն ուշ է: Այս հիվանդը, որի քաղը մինչ այդ 78 կգ-ից իջել է 48-ի, 2001 թ. հոկտեմբերին Երեւանում բուժում էր ստացել, 2002-ի գարնանը նրա նախկին քաղը վերականգնվել էր, իսկ մարմնի վրա առաջացած վերքերը մի քանի ամսվա ընթացքում լիովին փակվել են: Ընդ որում, Ա. Բ.-ն զարմանքով է նշել, որ Երեւանում շուրջ 6-ամսյա բուժման համար այնքան գումար է ծախսել, որքան մեկ այլ երկրում միայն դեղեր գնելու համար ծախսելու էր 6 ամսում:

Հ. Ղ.

Եղիսկոպոսաց հավաք Մայր աթոռ Սբ. Էջմիածնում

Մայր տաճարի օծման 1700-ամյակի հոբելյանական ձեռնարկումների շրջանակներում հոկտեմբերի 28-ին Մայր աթոռ Սբ. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի նախագահությամբ աշխատանքն սկսեց եղիսկոպոսաց խորհրդակցական հավաքը: Ամենայն հայոց հայրապետի հրավերով Հայաստանից եւ սփյուռքից հավաքին մասնակցում են 37 սրբազան հայրեր:

Ամենայն հայոց հայրապետի հանդիսապետությամբ սրբազան հայրերը, նորոգելով իրենց ուխտը հանդեպ Մայր աթոռ Սբ. Էջմիածնի, աղոթք մատուցեցին Մայր տաճարում՝ մասնակցելով Ճաշու պատարագին: Արարողությունից հետո վեհարանի հանդիսություններին սրահում հավաքի կազմակերպման հանձնախմբի ատենապետ, Եգիպտոսի թեմի առաջնորդ Տ. Զավեն արք. Չինչինյանի բացման խոսքով եղիսկոպոսաց հավաքն սկսեց աշխատանքը:

Հավաքի մասնակիցներին իր ողջույնի եւ օրհնության խոսքը բերեց Ամենայն հայոց հայրապետը: Նորին սրբությունը կարեւորությամբ շեշտեց եղիսկոպոսաց դասի առաքելությունը եկեղեցու կյանքում:

«Առաքելական հաստատությամբ եղիսկոպոսը բարձրաստիճան սպասավորն է, տեսուչն ու վերակացուն եկեղեցու կոչված նախանձավորը լինելու Հայաստանյայց եկեղեցու վարդապետության, հետեւորդը՝ ուղիղ ընթացքին ու գործերին մեր սուրբ հայրերի, Ավետարանական պատվիրանների ու պատգամների շավիղներում առաջնորդվելու եւ անկորուստ պահելու իր խնամքին հանձնված հոտը բանավոր: Մեր եղիսկոպոսները կոչված են նաեւ պատվիրակն ու դեսպանը լինելու Սբ. Էջմիածնի»:

Վեհափառ հայրապետն էական նկատեց եղիսկոպոսական հավաքների պարբերական գումարումը՝ ներկա ժամանակներում եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերներին ու կուսակված խնդիրներին համարժեքորեն արձագանքելու եւ պատասխաններ գտնելու համար:

Այնուհետեւ, ըստ նախատեսման, հավաքի մասնակիցներին ներկայացվեցին Նորվան եպս. Զաքարյանի եւ Եզնիկ եպս. Պետրոսյանի զեկուցումները եղիսկոպոսների եւ եղիսկոպոսաց դասի առաքելության, ինչպես նաեւ Հայ եկեղեցուն ու հավատացյալ ժողովրդին հուզող խնդիրների առնչությամբ: Զեկուցումների շուրջ ծավալվեցին քննարկումներ:

Հավաքն աշխատանքը կշարունակի եւ կամփոփի հոկտեմբերի 29-ին:

Ո՞վ պետք է վճարի ցայտաղբյուրների համար

Մեր ուսումնասիրություններից պարզվել է, որ ամբողջ ամառ Երեւան քաղաքի 1700 ցայտաղբյուրներից միայն 10 տոկոսն է ծառայում իր նպատակին, այն էլ ոչ կանոնավոր ջրամատակարարմամբ: Ժողովրդի մեջ կան կարծիքներ, թե սա էլ յուրօրինակ ձեւ է բիզնեսն առաջ տանելու, այսինքն՝ այգիներում ջուրը կտրում են հյութերի վաճառքին նպաստելու համար: Այս հարցով դիմեցինք «Ջրմուղ» ՓԲԸ-ի տնօրինությանը:

– Արդյոք «Ջրմուղ» ՓԲԸ-ն իր կանոնակարգում ունի՞ ցայտաղբյուրների մասին կետ:

Ըստ տնօրենության պատասխանի, համաձայն ՀՀ ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգերից օգտվելու կանոնների կետ 40-ի, «համայնքի տարածքում ցայտաղբյուրները տեղադրվում եւ շահագործվում են ՏՏՇ կազմակերպության թույլտվությամբ՝ շահագրգիռ մարմնի հետ կնքելով պայմանագիր: Ցայտաղբյուրի ջրի քանակը ջրաչափի բացակայության դեպքում որոշվում է ջրատարի թողունակությամբ՝ ջրի շարժման 1,5 մ/վրկ արագության եւ ջրամատակարարման փաստացի ռեժիմի տեւողության պայմաններում»:

- Անհատական ջրաչափերի ցուցանիշի դիմաց գրված գումարը վճարում է բաժանորդը, ընդհանուրինը՝ բաժանվում ջրաչափ չունեցող բնակիչների միջեւ: Իսկ ո՞վ պետք է վճարի ցայտաղբյուրների համար:

- Ըստ կանոնագրքի, այս մասին պետք է հոգան թաղապետարանները՝ յուրաքանչյուրը վճարելով իր տարածքում գտնվող ցայտաղբյուրների համար: Քանի որ «Ջրմուղը» մատակարարող սուբյեկտ է, որը նաեւ, փաստորեն, ջրի առք ու վաճառքով է զբաղված, արդա ցայտաղբյուրներին անվճար ջուր մատակարարել՝ կնշանակի ջրի կորուստներ տալ:

– Այդ դեպքում ինչո՞ւ դրանց վրա ջրաչափեր չեն տեղադրվում:

– Սա լավ միտք է, բայց ջրաչափ տեղադրելու դեպքում տվյալ ցայտաղբյուրի համար պետք է վճարի անհատ անձը: Օրինակ՝ մարդը որոշում է իր հարազատին նվիրված ցայտաղբյուր կառուցել: Դրա համար, ըստ օրենքի, պետք է մեզ հետ պայմանագիր կնքի, ջրաչափ տեղադրի եւ վճարի ըստ ցուցանիշի: Սակայն մինչ օրս ոչ մի նման հայտ չի ներկայացվել: Իսկ ինչ մնում է թաղապետարանների վճարմանը, արդա նրանք պարզապես անտեղյակ են այս օրենքներից:

ՆՈՆԱ ՁՈՒԼՈՒԿՅԱՆ
ՀԵՂԻՆԵ ՎԱՍԻՆՅԱՆ

Միջխաղային զանգահարողներին նպաստ «չի հասնում»

Սոցապ նախարարությունը մեր հանրապետության բնակիչներին առանց անակնկալների չի թողնում՝ երբեմն համագործակցելով այնպիսի «բարի համբավ ունեցող» ընկերության հետ, ինչպիսին «Արմենտելն» է: Օրինակ, սոցիալապես անապահով խավերին ամենամսյա նպաստներից զրկելու համար «Արմենտելից» տեղեկանում է, թե նպաստ ստացող որ ընտանիքներն են միջքաղաքային հեռախոսակապից օգտվում: Եթե Վանաձորում բնակվողը զանգահարել է, օրինակ, Գյումրի, ուրեմն, սոցապ նախարարության տրամաբանությամբ, լավ է ապրում եւ նպաստ չպիտի ստանա: Այստեղ բոլորովին հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ բնակչության գլխին կրակ ու պաշիժ դարձած «Արմենտելի» տվյալները կարող են սխալ լինել, որ շատ հաճախ մարդիկ այդ ընկերությանը վճարում են իրենց իրական պարտքից շատ ավելին: Ինչեւէ, միջքաղաքային զանգերը, ըստ սոցապ նախարարության, բարեկեցության նշան են: Այս տրամաբանությամբ գուցե վաղն էլ նպաստից զրկվեն նրանք, ովքեր տանը հեռախոս ունեն, կամ էլ նրանք, ովքեր տուն ունեն... Այսինքն՝ հարազատների հետ գոնե հեռախոսով հաղորդակցվելը նույնպես որոշ խավի մենաշնորհն է: Սակայն մեզանից յուրաքանչյուրը գիտի ընտանիքների, որոնց իրոք նպաստ հասնում է, սակայն անհրաժեշտությունից դրդված օգտվում են միջքաղաքային կապից: Ի վերջո, սոցապ նախարարության ինչ գործն է, թե նպաստը բնակիչն ինչպես է ծախսում՝ հա՞ց է առնում, թե՞ մի քանի օր հաց չի ուտում, որպեսզի զանգահարի բանակում ծառայող իր որդուն կամ էլ այլ քաղաքում բնակվող իր հիվանդ հարազատին: Նպաստն էլ նպաստ լինի, մի քանի հազար դրամ կազմող գումարը, միեւնույն է, ոչ մի հարց չի լուծում՝ կամ չոր հացի համար է ծախսվում, կամ հոսանքի: Համենայն դեպս, մարդկանց նպաստից զրկելու համար «Արմենտելի» տվյալները չէ, որ պիտի հիմք ծառայեն, որովհետեւ, ըստ այդ ընկերության հաշվարկների, եթե ամեն ամիս 2000 դրամ միջքաղաքային հեռախոսազանգի գումար է մուծվել, արդա չորս ամսվա միջինը կազմում է 9000 դրամ:

Ա. Ա.



Զարթնե՛ք, մելգոնյանցիներ, միացե՛ք եւ թույլ մի՛ տվեք

Խմբագրությունը շարունակում է ստացավ ընթերցողներից արձագանքներ սանձալ Կիպրոսի Մելգոնյան կրթական հաստատության շենքի վաճառքի շուրջ ծագող լուրերի առնչությամբ: Նրանցից ոմանք մտահոգություն են հայտնում, ինչպես, օրինակ, 1985-86 թթ. շրջանավարտ **Ադամ Պետիկյանը,** որը կոչ է անում բոլոր սաներին միանալ եւ թույլ չտալ նման աղեսաբեր քայլ:

Սիրելի աշխարհասփյուռ մելգոնյանցիներ, սա հրդեհի ազդանշան չէ, ոչ էլ կատակ: Հայ ազգային գանձերից մեկը՝ Մելգոնյան վարժարանը, մոտ 75 մլն դոլարով կիպրական մի շինարարական ընկերությանը վաճառվելու սպառնալիքի տակ է, գրում է նա եւ, դիմելով ՀԲԸՄ-ին ու հատկապես պրն Նուբար Դորյանին, նշում. «Չեռներդ հեռու մեր դպրոցից: Մելգոնյանը պատկանում է Մելգոնյան ընտանիքին եւ ամբողջ ազգին: ՀԲԸՄ-ն կամ որեւէ այլ կազմակերպություն կամ անձնավորություն իրավունք չունի վաճառելու այդ վարժարանը: Մելգոնյանը կառուցվեց պահպանելու մեզ անհետանալուց, ձուլվելուց: Մենք այսօր այստեղ ենք կռվելու հանուն այս տարածքի, դպրոցի, ոգու եւ ապագա սերունդների: Մելգոնյանի ոգին ոչ մի այլ հաստատություն չի կարողացել ներարկել մեզ: Հայ ժողովուրդը շարունակում է բարգավաճել նաեւ շնորհիվ Մելգոնյանի, որը սոսկ մի տարածք կամ շինություն չէ Նիկոսիայում, այլ ներկայացնում է հայ ժողովրդին ամբողջ սփյուռքում: Եվ դրա փակումը կամ վաճառքը հավասարազոր կլինի մի նոր ցեղասպանության կամ ահաբեկչական գործողության: Ժամանակն է կատարելու մեր հայրենասիրական պարտքը եւ բողոքել ՀԲԸՄ-ի Նյու Յորքի կենտրոնական վարչության վրդովեցուցիչ նախաձեռնության դեմ»:

Վերջում «Հայե՛ր, եկեք մի կողմ դնենք մեր քաղաքական, կրոնական ու այլ տարակարծությունները եւ գործենք միասին՝ վառ պահելու ու հաջորդ սերունդներին փոխանցելու Մելգոնյանի ոգին» կոչով դիմում է բոլորին. «Գրեք, խոսեք, էլ. փոստով հաղորդակցվեք ինչքան հնարավոր է շատ մարդկանց հետ եւ ՀԲԸՄ կենտրոնական վարչությանն ուղղված խստագույն նամակներով պահանջեք այդ ծրագրի ամբողջական վերացումը, որպեսզի շարունակվեն հայերին հայ դաստիարակելու ավանդույթները եւ որպեսզի հայերս որպես ազգ սփյուռքում թե հայրենիքում կարողանանք մրցել աշխարհի մյուս հարուստ եւ ուժեղ ազգերի հետ»:

Ուրիշ նամակագիրներ, օրինակ, Հյուսիսային Կարոլինայից **Արմեն Հարեյանը,** իրենց մտահոգություններին կցում են նաեւ առաջարկություններ. «Հնարավոր չէ՞ արդյոք, որ հայկական կազմակերպությունները կամ անհատները տրստի նման մի կառույց հիմնեն կամ մշտական կրթաթոշակի ֆոնդ ստեղծեն՝ հոգալու համար այդ կրթաջախի ծախսերը: Ի վերջո, ինչքա՞ն գումար է պետք այդ հաստատությունը պահելու համար: Մենք պետք է լրջորեն նստենք, հաշվարկենք եւ ըստ այդմ գործենք», գրում է Հարեյանը:

Հունաստանի պաշտպանության փոխնախարարը Հայաստանում

Հոկտեմբերի 29-31-ը ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ, գեներալ-լեյտենանտ Ա. Աղաբեկյանի հրավերով, պաշտոնական այցով Հայաստան կժամանի Հունաստանի ազգային պաշտպանության նախարարի տեղակալ Լազարոս Լոտիդիսի գլխավորած պատվիրակությունը:

Պատվիրակությունը հանդիպումներ կունենա ՀՀ վարչապետ Ա. Մարգարյանի, ՀՀ պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի, ՀՀ ԶՈՒ ԳՇ պետ, պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, գեներալ-գնդապետ Մ. Հարությունյանի, ՀՀ ԱԺ պաշտպանության, ներքին գործերի եւ ազգային անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Մ. Շահգելդյանի, ՀՀ-ում հունական համայնքի ներկայացուցիչների հետ, կայցելի Մատենադարան, Ճիծեռնակաբերդ եւ ծաղկեպսակ կդնի 1915 թ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:

ՀՀ ՊՆ մամլո քարտուղարություն

Ջուրն օգտագործել միայն տեխնիկական նպատակներով՝ գոնե այս 2-3 օրը

Սկիզբը էջ 1

երեկվա ընթացքում ջրմուղ-կոյուղու լաբորատորիան 2 անգամ ջրի փորձաքննություն է անցկացրել: Այժմ փորձագետները պարզում են սանիտարիայի մասնագիտական լաբորատորիայի դրական արդյունքներին ետ, որպեսզի այսօրվանից ցանց մղեն ոչ թե քլորի բարձր պարունակությամբ, այլ խմելու համար պիտանի ջուր:

Առողջապահները նախազգուշական հանձնարարականներ են հղում նաեւ Կենտրոն համայնքի բնակիչներին, քանի որ, ըստ Մուրադ Սարգսյանի, Արաբկիրի համայնքը պարարակող ջրատարը սնում է նաեւ Կոնդի համայնքին, որը Կենտրոնի տարածքում է: Եվ բացի այդ, երկարակեցության ժամկետները պարառած խողովակաշարերը գրեթե ամենուր մաշվածության նույն ցուցանիշներն ունեն, մեկուսացված չեն իրարից, եւ արահովագրական միջոցառումները ծիշտ են նաեւ Կենտրոն համայնքի համար:

Կ. Գ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ժԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊՍՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լրագրողների սենեակ
/ հեռ. 581841
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Apple Macintosh
համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Ներիկ կյանք

Արդեն քանի տարի իբրեւ նոր իրողություն, որ ռեֆորմի հավակնություն ունի, փորձ է արվում մեր առողջապահական իրականություն ներմուծել ընտանեկան բժշկի ինստիտուտը: Ընտանեկան բժշկի կոչումն ու անելիքն ինչ-որ տեղ հիշեցնում են պոլիկլինիկաների տեղամասային բժիշկներին: Տարբերությունը նրանցից եւ առավելությունը թերեւս այն է, որ տվյալ տեղամասի բնակիչն իր բժշկին ընտրելու հնարավորություն չունի, իսկ ընտանեկան բժշկի դեպքում կարող է տարբերակումներ անել: Նրանք լինելու են ընտանիքի առողջության առաջնային պահպանման գինվորը, ում կում, ընտանեկան բժիշկը հարկադրված է անընդհատ զարգացնել իր մասնագիտական գիտելիքներն ու ընդունակությունները: Ընտանեկան բժիշկը, ի տարբերություն նեղ մասնագետների, կոչված է լուծելու բազմազան ու բազմաթիվ առողջապահական խնդիրներ՝ մանկաբուժական, թերապեւտիկ, մանկաբարձագինեկոլոգիական, ինֆեկցիոն, նույնիսկ հոգեբանական: Բժշկին վճարում է պետությունը՝ պետպատվերի շրջանակներում յուրաքանչյուր անձի համար սահմանված վճարաչափերով: Մեկ բժիշկը պիտի սպասարկի առավելագույնը 2500 մարդու: Եվ բժիշկը շահագրգռված կլինի ինչ-

Ընտանեկան բժիշկների տեսլականը Հայաստանում

ազատ ընտրելու իրավունք ունի յուրաքանչյուր ոք: Այս մասին բազմիցս շեշտվեց երեկ քաղաքապետարանում կազմակերպված հանդիպմանը՝ առողջապահության եւ սոցիալական աջակցության վարչության պետ Արմեն Սողոյանի, առողջապահության նախարարության «Առողջության առաջնային պահպանման բաժնի» պետ Ռուզաննա Յուզբաշյանի, Հայաստանի սոցիալական բարեփոխումների ծրագրի ներկայացուցիչ Տատյանա Մակարովայի մասնակցությամբ:

Հանդիպման առիթը հոկտեմբերի 1-ից Երեւանի համայնքում բժիշկների ազատ ընտրության համակարգի ներդրումն է: Համայնքի «Երեւանի» բժշկական կենտրոնը եւ թիվ 17 պոլիկլինիկան բժշկական առաջին օջախներն են, ուր փորձարկվում է նոր մեխանիզմը: Համայնքի բնակչությունն այսուհետ սփոփված չի լինի օգտվել միայն տարածքային պոլիկլինիկայի թերապեւտի, մանկաբույժի սպասարկումից, այլեւ կարող է բժշկի դիմել համայնքի տարածքում գործող որեւէ այլ պոլիկլինիկայում:

Ողջ ախտարհում լայն տարածում գտած սպասարկման այս ձեւը, հայ առողջապահների կարծիքով եւս, կնպաստի բուժսպասարկման որակի բարելավմանը, քանի որ հայտնվելով մրցակցային անսովոր իրավիճակ, ընտանեկան բժիշկը հարկադրված է անընդհատ զարգացնել իր մասնագիտական գիտելիքներն ու ընդունակությունները: Ընտանեկան բժիշկը, ի տարբերություն նեղ մասնագետների, կոչված է լուծելու բազմազան ու բազմաթիվ առողջապահական խնդիրներ՝ մանկաբուժական, թերապեւտիկ, մանկաբարձագինեկոլոգիական, ինֆեկցիոն, նույնիսկ հոգեբանական: Բժշկին վճարում է պետությունը՝ պետպատվերի շրջանակներում յուրաքանչյուր անձի համար սահմանված վճարաչափերով: Մեկ բժիշկը պիտի սպասարկի առավելագույնը 2500 մարդու: Եվ բժիշկը շահագրգռված կլինի ինչքան հնարավոր է շատ մարդկանց «հավաքագրել» իր մոտ (իհարկե, չգերազանցելով 2500-ի սահմանը), քանի որ իր ստացած գումարը համապատասխանելու է նրանց թվին: 2000 մարդ հավաքագրելու դեպքում, ըստ այսօր գործող նորմատիվների, ընտանեկան բժշկի ախտատվարձը կազմում է ընդամենը 50 դոլարին համարժեք դրամ:

Ընտանեկան համակարգի ներդրումը, իհարկե, չի նշանակում, որ այլեւս վերջ պիտի դրվի վճարովի ծառայություններին: Նեղ մասնագիտական ծառայությունները եւ լաբորատոր-գործիքային հետազոտությունները, պետպատվերի շրջանակներից դուրս բուժօգնությունները շարունակելու են վճարովի մնալ:

Ընտանեկան բժիշկների թիվն ավելի շատ է մարզերում, ավելի փոքր՝ Երեւանում: 8 բժիշկ ախտատում է թիվ 17 պոլիկլինիկայում, եւս 30-ը վերապատրաստման տարբեր փուլերում են, Երեւանի պոլիկլինիկայում 4 ընտանեկան բժիշկ կա, մյուսները դարձյալ դեռ վերապատրաստվում են:

Ի դեպ, բնակիչը կարող է փոխել ընտանեկան բժշկին, եթե դժգոհ է նրա սպասարկումից:

Այս նոր իրողությունը, հաջողության հասնելու դեպքում, հնարավոր է, որ վերակենդանացնի կանխարգելիչ բժշկությունը, ինչը շարունակում է թանկ հաճույք մնալ համակարգի համար: Հաճախակի շփվելով ընտանիքի բոլոր անդամների հետ, բժիշկը հիվանդությունները վաղ ախտորոշելու բացառիկ հնարավորություն ունի, իսկ հիվանդները՝ բուժվելու եւ նույնիսկ՝ փրկվելու մահից: Ընտանեկան բժիշկը կարող է անմիջականորեն ուսումնասիրել այս կամ այն հիվանդությանը նպաստող սոցիալական գործոնները, ժառանգական նախատրամադրվածությունը, եւ ժամանակին խորհուրդներ տալ՝ կանխելով հիվանդության սրացումը:

Տեսականորեն ամեն ինչ հարթ ու խաղաղ է ընթանում, բայց արեւմուտքից մեր կյանք ներմուծված շատ իրողությունների նման այս մեկն էլ շատ խոչ ու խութեր է հաղթահարելու, մինչեւ մեր կեցության մասնիկը դառնա: Հնարավորությունները խիստ անբավարար են նախ կադրերի իմաստով: Արդեն 4 տարի Համաբխարհային բանկի վարկային միջոցներով բժիշկներ են վերապատրաստվում հատկապես գյուղական վայրերում՝ նկատի առնելով առողջապահական ապահովության տեսակետից սրանց առավել խոցելի վիճակը: 100 գյուղերում արդեն ընտանեկան բժիշկներ կան: Սակայն Հայաստանում շուրջ 9 հազար բժիշկներ կան, որոնք բոլորն էլ նոր համակարգի անցնելու առնչությամբ վերապատրաստումների կարիք ունեն: Այլ բան է տիրապետել մեկ եւ միանգամայն այլ բան՝ մի քանի նեղ մասնագիտությունների: Իսկ դա միայն դրսի վարկային միջոցներով կազմակերպել հնարավոր չէ: Պետությունը եւս պիտի մասնակից լինի՝ ավաղ, իր ոչ վստահելի գրպանի պարունակությամբ:

Ինչեւէ, առայժմ միակ շոշափելի արդյունքը, որ գրանցվել է նորելուկ ինստիտուտի գործունեությունից, ուռուցքային հիվանդությունների եւ տուբերկուլյոզի վաղ հայտնաբերման ցուցանիշների աճն է:

ԿԱԲԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

1000 թափանցիկ քվեատուփ Հայաստանից Վրաստանին (վերադարձնելու պայմանով)

Երեկ Երեւանից Թբիլիսի ուղեւորված բեռնատար մեքենայի բեռը թեեւ սովորականից թեթեւ էր, սակայն ծանրակշիռ ներդրում էր Վրաստանում ժողովրդավարության կայացման ճանապարհին: Խոսքը 1000 թափանցիկ քվեատուփերի մասին էր, որոնք ընտրական թոհուբոհով անցած Հայաստանը զիջում է հարեւան երկրին: Իհարկե, վերադարձնելու պայմանով:

Երեկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում փոխնախագահ Համլետ Աբրահամյանը եւ Վրաստանի ԿԸՀ ներկայացուցիչ Նոդար Եղրեմիձեն քվեատուփերը ժամանակավորապես Վրաստանին տրամադրելու պայմանագիր ստորագրեցին:

Նոյեմբերի 2-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններին մասնակցելու է մոտ 1 միլիոն 800 հազար ընտրող: Անհրաժեշտ 3 հազար քվեատուփերից 2 հազարը Վրաստանն ունի: Հազարը տրամադրում է Հայաստանը, սակայն մեր երկրի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մասնակցությունը Վրաստանի ընտրություններին թափանցիկ քվեատուփերով չի սահմանափակվում: Համլետ Աբրահամյանը տեղեկացրեց, որ իբրեւ դիտորդ Վրաստան են մեկնելու երեք հոգի տարածքային ընտրական հանձնաժողովներից, մեկը՝ ԿԸՀ-ից: Հավանաբար հաշվի առնելով Հայաստանի փորձը, լրագրողներին հետաքրքրում էր, թե որքանով կարելի է վստահ լինել, որ թափանցիկ քվեատուփերը թափանցիկ ընտրությունների երաշխիք են: Նոդար Եղրեմիձեի կարծիքով, երաշխիք չեն, սակայն բարձրացնում են թափանցիկ ընտրությունների հավանականությունը: Նա նաեւ տեղեկացրեց, որ իր հայաստանցի գործընկերների հետ քննարկել է ընտրությունների անցկացման փորձը մեր երկրում՝ ստանալով որոշ գործնական խորհուրդներ: Թե ինչպիսին էին դրանք, նա չմանրամասնեց, բայց կարելի է ենթադրել, որ դրանք կապ են ունեցել քվեատուփերի կիրառման հետ: Այսինքն՝ Հայաստանում կիրառված ընտրական «թափանցիկ» տեխնոլոգիաներին են առնչվել:

Դեռեւս հիշում ենք, որ թափանցիկ քվեատուփերը Հայաստանում որոշակի դժվարություններ առաջացրին իրենց փորության պատճառով, եւ մանավանդ լցվելու դեպքերում լուրջ գլխացավանք էին դառնում: Հաշվի առնելով, որ Վրաստանում ընտրողների թիվն ավելին է, քան մեր երկրում (սա ենթադրում է, որ տպագրվող քվեաթերթիկների թիվը եւս ավելին է), ընտրական մեր օրինակին հետեւելու դեպքում վրացիներն ավելի լուրջ դժվարությունների առջեւ են կանգնելու:

Մասնավորապես՝ եթե պրն Եղրեմիձեն լավ է յուրացրել հայաստանցի իր փորձառու գործընկերների դասը, ապա հարկադրված է լինելու քվեատուփերի մեծաքանակ լցոնումներ կատարել, որն իր երկրի Վրաստանի պարագայում կարող է գերազանցել մեր խղճուկ 450 հազար քվեաթերթիկների թիվը, որի դեպքում մեր եւ իրենց քվեատուփերը հաստատ չեն բավարարի:

Թափանցիկ քվեատուփերի փոխանցմանն օժանդակում է ԵԱՀԿ-ն: Մեր երկրում ԵԱՀԿ նորանշանակ դեսպան Վլադիմիր Պրյախինը սա գնահատում է իբրեւ «մի երիտասարդ ժողովրդավարության նվերը մյուս երիտասարդ ժողովրդավարությանը»:

Մ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

«Նորադուզ գյուղում 5 տարուց ավելի գործում է մի բանդա, որի մասին տեղյակ է Գեղարքունիքի մարզի ողջ ղեկավարությունը»

Երեկ փաստաբան Ռուբեն Ոստունու հրավիրած ասուլիսում իր պատմությունն այսպես սկսեց Նորադուզի բնակիչ Քնարիկ Գրիգորյանը: Նա պատմեց իր որդու եւ հիշատակվող բանդայի հակամարտության մասին:

Միջադեպը տեղի է ունեցել այս տարվա մարտին: «Սեւան» ազգային պարկի Գավառի տարածքի տնօրեն տկն Քնարիկի որդի Վրեժ Գրիգորյանը ցերեկը ախտատանից վերադառնալիս Սեւան-Գավառ խճուղում հանդիպել է նույն գյուղի բնակիչ Գարուն Գառնիկի Մանուկյանին: Վերջինս, ըստ տկն Քնարիկի, եղել է թմրանյութի ազդեցության տակ եւ դանակը ձեռին հարձակվել է Վրեժ Գրիգորյանի վրա:

Իրար քաշքշելուց հետո Վրեժ Գրիգորյանը հեռագա կռվից խուսափելու համար նստում է մեքենան եւ հեռանում: Երեկոյան կողմ Վրեժի ընտանիքին տեղեկացնում են, որ Գրիգորյանին պատկանող խանութն այրվում է: Այդ ժամանակ էլ տկն Քնարիկի քրոջ որդի Հրանտ Նավոյանն ասում է, որ Գարուն Մանուկյանը մահացել է:

Պարզվում է, որ քաշքշուկի ժամանակ Գարուն Մանուկյանը ոտքից վնասվածք է ստացել եւ 3 ժամ անց մահացել: Ըստ Քնարիկ Գրիգորյանի, Գարուն Մանուկյանի հայրը՝ Գառնիկը բժշկական քննություն թույլ չի տվել:

Քանի որ Գարուն Մանուկյանի եւ Վրեժ Գրիգորյանի միջեւ արյունակցական կապեր կային, Քնարիկ Գրիգորյանին տեղեկացրել են, որ Գառնիկ Մանուկյանի տանը զինված մարդիկ են հավաքվել: Տկն Քնարիկը զանգահարել է մարզային դատախազություն՝ խնդրելով իրենց տունը վերցնել հսկողության տակ: Բավականին ուշ Գրիգորյաններից տուն են եկել ոստիկաններ, բնակիչներին տնից հեռացրել եւ նախաճեռնել են տան պաշտպանությունը: Տանն է մնացել միայն Քնարիկ Գրիգորյանի փեսան՝ Նովլեթ Խաչատրյանը:

«Գիշերը զինված բանդան անարգել հարձակվեց տանս վրա: Հարձակվողները կրակահերթեր արձակեցին դեպի տան ներսը, միլիցիայի ներկայությամբ ամբողջ տունս այրեցին, նաեւ ավտոտնակները՝ մեքենայի հետ: Ոստիկանների ներկայությամբ նրանք ոչ միայն այրում էին, այլեւ զբաղվում թալանով», պատմությունն այսպիսի շարունակություն է ունեցել ըստ Ք. Գրիգորյանի: Այնուհետեւ ծեծելով եւ դանակահարելով Նովլեթ Խաչատրյանին, բանդան խանգարել է անգամ հրշեջ մեքենաներին՝ մարելու կրակը: «Այդ ամբողջ ընթացքում ոստիկանները հանդիսատեսի դերում էին», այրվող տնից ոչ շատ հեռու այս ամենի ականատեսն է եղել տկն Քնարիկը:

Վրեժ Գրիգորյանի հղի կինը 3 անչափահաս երեխաների հետ գտնվել է հայրական տանը՝ Մայիս Անտոնյանի բնակարանում: Տունն այրողները, իմանալով ընտանիքի գտնվելու տեղը, հարձակվել են նաեւ Անտոնյանի բնակարանի վրա, կրակահերթեր արձակել: Հրազենային վնասվածք է ստացել Մուրադ Անտոնյանը, ծեծի են ենթարկել հարսի մորը, ընդհատվել է հարսի հղիությունը:

Այս ամենից հետո Գեղարքունիքի ոստիկանության վարչությունում Գառնիկ Մանուկյանը, Քնարիկ Գրիգորյանի խոսքերով, խփել է վերջինիս, իսկ 2 ամիս անց ծեծի է ենթարկվել Ք. Գրիգորյանի քրոջ որդի Հրանտ Նավոյանը: Պատահածից 6 ամիս անց «Կամազ» մեքենայով ջարդուփշուր է արվել նաեւ Վրեժ Գրիգորյանին պատկանող բենզալցակայանը:

Ներկայումս Վրեժ Գրիգորյանը թաքնվում է՝ վախենալով բանդայի «հաշվեհարդարից»: Վրեժ Գրիգորյանը թաքնվում է նաեւ իրավապահներից, քանի որ նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Ներկայացնելով այս ողջ պատմությունը, փաստաբան Ռուբեն Ոստունին նշեց, որ լրատվամիջոցների պաշտպանության կարիքն է զգացվում, քանի որ գործը դատախազությունում քննելու Ոստունու դիմումները մերժվում են: Այդպիսով՝ գործը մնացել է այն ոստիկանության քննությանը, որը, ըստ վկաների, այդպես էլ մնացել է հանդիսատեսի դերում:

Այս ամենը կարող էր ըստ էության վստահության չարժանանալ, եթե չնշվեին կոնկրետ մեղավորներ: Մասնավորապես, Քնարիկ Գրիգորյանի խոսքերով, բանդան հովանավորում է Գեղարքունիքի մարզի ոստիկանության վարչության պետի տեղակալ Յուրա Գեւորգյանը: Ի դեպ, բանդան անօրինական ճանապարհով ծուկ է արտահանում Բագրատաշեն, Դիլիջանից մեքենաներով, դարձյալ անօրինաբար, փայտ է տեղափոխում Գեղարքունիք: Ըստ տկն Գրիգորյանի, նման գործունեությունն էլ Մանուկյանների եւ Վրեժ Գրիգորյանի ընդհարումների պատճառ է եղել:

Ինչ վերաբերում է տունը հրկիզողներին եւ ենթադրաբար տան բնակիչների վրա կրակողներին, նշվում են նաեւ նրանց անունները. Համլետ, Հովիկ Ավետիսյաններ, Հակոբ, Ռուբեն, Սասուն Մանուկյաններ, Գագիկ Գրիգորյան:

Ավելացնենք, որ Քնարիկ Գրիգորյանն իր հարսի եւ անչափահաս թոռների հետ այսօր անօթեւան է եւ սպառնալիքի տակ:

Այս պատմությունը ճշմարտության անգամ փոքր տոկոսի դեպքում ընդամենը վկայում է հասարակության մեջ ամրապնդված մի մոտեցում, թե «մեծ գողը ոստիկանն է»: Այս դեպքում թերեւս ճիշտ կլիներ, որ դատախազությունն իսկապես լրջորեն զբաղվեր նման գործերով՝ անձնական հաշվեհարդարների եւ բանդաների խնդիրները լուծելու համար:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐԺԱՐԺԱԾ

Բարեգործություն՝ պարուրված խորհրդավորությամբ

Երեւանի «Ռոտարի» ակումբում

Ամեն չորեքշաբթի «Անի» հյուրանոցում Երեւանի «Ռոտարի» ակումբն իր շաբաթական հավաքներն է անցկացնում: Եվ քանի որ խորհրդավորության ոգով էր վերջերս իջեցվել այս ակումբի վրա, մասնակցեցինք իրենց նմանատիպ մի հավաքի՝ առանց հրավերի եւ զգուշացման, որեւէ խոչընդոտի չհանդիպելով: Ռոտարիականներն իրենց նիստը սկսում եւ ավարտում են (ինչպես ամենուրեք) զանգի զողանջներով, իսկ Երեւանի «Ռոտարի» ակումբի մասնակիցները հոտնկայս երգում են Հայաստանի Հանրապետության օրհներգը: Ակումբը հաճախ է ունենում հյուրեր: Այդ օրվա ծրագրում նախատեսված ելույթների (հարկային պետական ծառայության օպերատիվ հետախուզական վարչության ներկայացուցչի, NTI կենտրոնի մարկետինգի գծով տնօրենի, «Անելիք» բանկի նախագահի տեղակալի) շուրջ ծավալվեց շահագրգիռ քննարկում:

Նիստն անցկացնում էր «Ռոտարի» ակումբի փոխնախագահ Հովսեփ Սեֆերյանը: Պետերբուրգի «Ռոտարի» ակումբի ներկայացուցիչն առաջին անգամ էր այցելում հայ ռոտարիականներին, եւ, ըստ ավանդույթի, դրոշներ փոխանակվեցին: Գերմանիայի քաղաքներից մեկի «Ռոտարի» ակումբի ներկայացուցիչը ներկաներին տեղեկացրեց, որ մի քանի օրից Զեյթուն-Քանաքեռ եւ Աջափնյակ համայնքներում բացվելու է բարեգործական ճաշարան, որտեղ անվճար կսնվեն 700 ծերեր եւ սոցիալապես անապահով մարդիկ: Ծրագիրն իրականացվել է տեղի (Գերմանիայի) ռոտարիականների շնորհիվ, ովքեր դիմել են բազմաթիվ կազմակերպությունների՝ ֆինանսներ հայթայթելու նպատակով:

Այսպես ուրեմն, 1905 թ. Պոլ Հարիս անունով մի իրավաբան գյուղից տեղափոխվում է Չիկագո: Եվ որովհետեւ մենակ է զգում մեծ քաղաքում, փնտրում է իր նմաններին: Այնպես է ստացվում, որ միանգամայն պատահաբար հավաքվում են տարբեր կրոնների, տարբեր մասնագիտությունների եւ ազգությունների 4 մարդ: Առաջին ժողովը տեղի է ունենում 1905 թ. փետրվարի 23-ին, որոշում են ամեն շաբաթ հավաքվել մեկի տանը եւ քննարկել ընկերային զանազան հարցեր:

Ընկերակցության անվանումը ծագում է ռոտացիայի (պտույտ) բնույթից: Անցած հարյուր տարիների ընթացքում կազմակերպությունն այնպիսի շարժում է սկսել, որ աստիճանաբար այդ չորս հոգուց հզորացել եւ այսօր արդեն աշխարհի շուրջ 160 երկրներում գործում են բազմաթիվ ռոտարի ակումբներ, որոնց անդամակցում է 1.300.000 մարդ: Իրենց գինանշանը շարժումը խորհրդանշող անիվն է, ունեն խորհրդանիշ-դրոշակ, գործում է կանոնադրություն, գոյություն ունեն անդամակցման, նաեւ հեռացման որոշակի սկզբունքներ: Որդեգրած լոզունգն է՝ ծառայություն սեփական անձից վեր (անանձնական), գործելակերպի սկզբունքը՝ որեւէ գործ նախաձեռնելիս հաշվի առնել հետեւյալ հանգամանքները՝ ճշմարիտ կամ արդա՞ր է տվյալ գործը բոլոր կողմերի համար, արդյո՞ք նպաստո՞ւմ է բարեկամությանը, խաղաղությանը:

Ըստ Հովսեփ Սեֆերյանի, «Ռոտարին» բարեգործական կազմակերպություն է, որի անդամները միավորված են մեկ ընդհանուր նպատակի շուրջ՝ միասին հասարակության համար օգտակար դաշտ որոնել եւ բարի արարել:

Ակումբ հիմնադրելու համար նվազագույնը պետք է ապահովվի 20 մարդու ներկայություն: Որեւէ մեկը անձնական նախաձեռնությամբ չի կարող անդամագրվել, նա պետք է ունենա ռոտարիականներից մեկի հրավերը: Նախեւառաջ հաշվի է առնվում անձի մարդկային եւ բարոյական նկարագիրը (ազնվություն, հանդուրժողականություն, գթասրտություն, ուրիշին օգնելու կամեցողություն), ցանկալի է ակումբի անդամների մասնագիտական բազմազանությունը, նախընտրելին ամեն մասնագետից 1-2 մասնակից ունենալն է, կարեւոր է, որ տվյալ անձն իր ոլորտում որոշակի հաջողություն արձանագրած լինի եւ ֆինանսական կարողություն ունենա, որովհետեւ, ինչպես պրն Սեֆերյանն է ասում. «Նա գալիս է տալու, ոչ թե ստանալու»: Ակումբի մեկ անդամի դեմ լինելու պարագայում (հիմնավոր պատճառաբանությամբ եւ ապացույցներով) նորի անդամագրումը չի կարող կայանալ:

Տարվա ընթացքում ակումբի նիստերին իր մասնակցության 60 տոկոսը չապահոված, անդամավճար չմուծած կամ չարաշահումներ կանանչյան, քանի որ նրանք հայկական ակումբի կնքահայրերն են (նոր ակումբ բացվելու պարտադիր պայմաններից մեկն է): Իրականացրել են մի շարք ծրագրեր: Երկու տարի առաջ սկսված շարժական ատամնաբուժարանի ծրագիրը շուտով կյանքի կկոչվի: Համապատասխան սարքավորումներով ավտոբուսները շրջելու են հայկական գյուղերով՝ բնակիչներին մատուցելու ատամնաբուժական ծառայություններ: Ռոտարիականները կարեւորում են մանկական պոլիոմելիտի դեմ իրենց մատուցած ծառայությունը, շուրջ 500-600 հազար դոլար է պահանջվել Հայաստանում պոլիոմելիտի դեմ պատվաստանյութ ապահովելու համար: Սարքավորումներ են տրամադրել Երեւանի աչքի մանկական կլինիկային, պարբերաբար կազմակերպում են այցելություններ թանգարաններ, եկեղեցիներ, իրականացրել են բակերի մաքրման ծրագիր, ստեղծվել են խաղահրապարակներ, այցելում են ծերանոցներ, հիվանդանոցներ՝ նվերներ, դեղորայք են բաժանում, հաշմանդամներին սայլակներով են ապահովում եւ այլն:

Մոտավորապես երբ այսպիսի նկարագիր ունեն ռոտարիականները, ապա հասարակության մեջ ինչո՞ւ է շրջում կասկածի ուրվականը, իբր գաղտնի, մութ կազմակերպություն է՝ մասոնների հետ որոշակի առնչություններով (ձեռիս «Ռոտարի» ակումբի խորհրդանիշ-դրոշակը տեսնելով, մի քաղաքացի տարակուսած հարցրեց՝ ռոտարիակա՞ն ես:- Ինչո՞ւ այդպես: - Դե, նրանք մասոններ են: - Որտեղի՞ց իմացար,- հարցրի: - Մամուլն է ասում,- պատասխանեց):

«Ճշմարտությունը արեւի պես է, վարագույր չես կարող քաշել արեւի վրա: Մենք քրիստոնեական սկզբունքով ենք գործում. որեւէ բարեգործություն չի գովազդվում, չի թքկահարվում: Մեզ շփոթում են մասոնների հետ, ասում է պրն Սեֆերյանը, որ նաեւ «Հայ գործարարների ընկերակցության» նախագահն է, սակայն մենք թափանցիկ կազմակերպություն ենք՝ մեր կանոնադրությունը, անդամների ցանկը հրապարակված է, կարող եմ տրամադրել: Մասոնները գոց կազմակերպություն են, քաղաքական նպատակներ էլ հավանաբար ունեն: Մեր գինանշանը անիվն է, իրենցը՝ կարկինաձեւ եռանկյունին: Իրենց մեջ հիերարխիայի 33 աստիճան կա, ամեն աստիճանավոր իրենից ներքեւի օրենքներն ու կանոնները գիտի, իրենից վերեւինը չգիտի: Իրենց սկզբունքների մեջ աստվածավախությունը կա, Աստծուն Գերագույն ճարտարապետ են կոչում, նպատակը՝ երուսաղեմում Սողոմոնի տաճարի վերականգնումն է: Սրա համար ամեն միջոց իրար օգնելու եւ քաղաքականություն խաղալու իրենց թույլատրված է: Մենք այդպիսի նպատակ չունենք: Շուրջը բարիք սփռելն է մեր նպատակը: Էլիտար ակումբ է «Ռոտարին», ամեն մարդ չի կարող անդամակցել: Իսկ մամուլում հրապարակված անուններից միայն Սիարոն Ադիբեկյանն է, որ մեր ակումբի անդամ է, բայց նա մասոն չէ: Այս լուրերը տգիտության արդյունք են: Ճշմարիտ տեղեկություն չկա, մարդիկ վազում են սենսացիայի հետեւից, շատում են չգիտակցված բանի մասին կարծիք հայտնել, թե եկել ենք Հայաստանը քանդելու»:

Մեզ մոտ սովորաբար այդպես է, ծայրահեղություններ մեջ ենք ընկնում. յուրաքանչյուր օտարամուտ կամ օտարահունչ երեւույթ կամ շատ լավ է, վազում ենք հետեւից, կամ հակառակը՝ ազգամոլ է, քայքայիչ: Սիրում ենք առանց ուսումնասիրելու, ճանաչելու կարծիք հայտնել, մոդայի՞ն ենք տուրք տալիս, թե՞ շատ հայրենասեր ենք ուզում ձեւանալ, հարց է տալիս Հ. Սեֆերյանն ու շարունակում. «Մենք փոքր ենք: Սովետի փլուզումից հետո մեծ անկում կրեցինք: Երկրաշարժը, ղարաբաղյան հակամարտությունը եւ դրանից բխած հետեւանքները (շրջափակում, տնտեսական քայքայում) ավելի տկարացրին մեզ: Տկարը խոցելի է միշտ: Մենք կարծում ենք՝ դրսից եկողները մեր այս տկար պահն օգտագործում են եւ օգնության պիտակի տակ քայքայում մեր ազգային արժեքները, դրանով իսկ ոչնչացնում մեզ: Այն հայը, որ գիտակից է իր ազգային արժեքներին, իր պատմության ակունքներից է ջուր խմել, անհնար է, որ շեղվի:

Հայաստանը ծաղկել է, երբ կամրջի իր դերն է խաղացել արեւմուտքի եւ արեւելքի միջեւ: Ինտեգրացումն աշխարհի մեջ այլ բան է, ձուլումն ուրիշ բան է: Մենք պիտի աշխարհի մեջ մերվենք՝ մեր ազգային դիմագիծը, արժեքները պահպանելով, որ համ ու հոտ տանք այդ աշխարհին, այլապես աշխարհին էլ ծառայած չենք լինի, մեզ էլ:

«Ռոտարին» ինձ համար սեր է, ծառայություն է, երջանկության բանալի է: Իմ սկզբունքն է՝ ավելի լավ է մոմ վառել, քան թե խավարն անիծել: Եթե, ասենք, այս չկա, այն չկա, սա սխալ է, նա սխալ է, ոչինչ չի ստեղծվի: Դու քո մոմը վառիր, որ խավարը փարատվի, դու քարը քարի վրա դիր, դու քո բարի գործն արա: Ռոտարացին այսպես է մտածում՝ ինչ կարող եմ անել, եւ այդ բարիքն է անում»:

ՄԵԼԻՆԵ ԲԱԳԱԼՅԱՆ

Նոր պատկերազարդ գիրք «Հայ Երուսաղեմ»

Երուսաղեմ այցելած յուրաքանչյուր ոք գիտի, թե հոգեւոր ինչ հզոր էներգիայով է լի այդ հիրավի երկնային քաղաքը: Հոգեւոր առումով Երուսաղեմը համարվում է համայն աշխարհի մայրաքաղաքը, քանզի այնտեղ այնքան շատ են տարբեր ազգերի սուրբ մասունքները: Նրանցից ամեն մեկի համար Երուսաղեմն իր տունն է ու, ինչու չէ, նաեւ հոգեւոր հայրենիքը:

Հայի համար Երուսաղեմն առանձնահատուկ նշանակություն ունի, թե հոգեւոր, թե մշակութային առումներով: Վկայություններ կան, որ հայերը Երուսաղեմում հաստատվել են մինչ քրիստոնեություն ընդունելը: Երուսաղեմցիներն ասում են, թե քաղաքն ինքն է ընտրում իր բնակիչներին՝ նրանց նախնական փորձության ենթարկելով: Ահա թե ինչու շատ-շատերն, անկախ ազգությունից, մեկ շաբաթ անգամ չեն դիմանում ու հեռանում են: Հայերը դիմանում են արդեն 17 դարից ավելի՝ տարբեր ժամանակաշրջաններում ենթարկվելով ամենածանր փորձություններին:

Երուսաղեմի հայերի ու հայոց սրբավայրերի մասին մի շարք գրքեր են գրվել, որոնց հեղինակներն այնտեղ ժամանակավորապես ապրած հայ կամ օտար մտավորականներն են, եկեղեցականները: Սուրբ քաղաքը նրանց աչքերում դրոշմվել է իբրեւ սեր, հիացում, զարմանք...

«Հայ Երուսաղեմ» եռալեզու գիրքը, որ վերջերս լույս է ընծայել ռուս-հայկական սլավոնական համալսարանը, Երուսաղեմի սրբավայրերի ուղեցույց է, որը կազմել են վանքի վանական էմմանուել Աբաջանյանն ու Ժառանգավորաց վարժարանում մեկ տարի առաջ հայ գրականություն դասավանդած Գեւորգ Մադոյանը: Վերջինս Երեւանի սլավոնական համալսարանի հայագիտության բաժնի վարիչն է:

Գրքի նախաբանում հեղինակները ներկայացրել են հայերի ծագման, հայոց այբուբենի ստեղծման մասին համառոտ տվյալներ, նշելով, որ 7-րդ դարում Ավետյաց երկրում եղել են ավելի քան 70 հայկական վանքեր, իսկ 628 թվականին հիմնվել է հայոց պատրիարքությունը:

Հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով 71 էջանոց գրքում զետեղված են բազմաթիվ լուսանկարներ, որոնք պատկերում են սրբավայրերի ամենագողտրիկ անկյուններն անգամ, իսկ դրանց կողքին պարզ ու մատչելի լեզվով խոսվում է սրբավայրերի պատմության մասին: Պատմությունը սկսվում է IV դարի սկզբում Գրիգոր Լուսավորչի կողմից Սրբոց Հակոբեանց վանքի հիմնադրմամբ, Տրդատ արքայի հովանավորությամբ եւ օժանդակությամբ: Այնուհետեւ մանրամասն ներկայացվում են մայր վանքը՝ Ս. Հակոբը, իր բոլոր մասունքներով, Ս. Թորոս եկեղեցին, որի կառուցումը, ըստ ավանդության, կապվում է Կիլիկիո Հեթումյան հարստության հետ եւ թվագրվում 1266-1300 թթ.: Ս. Թորոս եկեղեցին հայտնի է որպես հնագույն ձեռագրերի մատենադարան, ուր պահվում են մոտ 4 հազար պատմամշակութային արժեք ունեցող ձեռագրեր: Հաջորդը Հրեշտակապետաց եկեղեցին է, իր հրաշագործ ծիքենիով, որին կապված է եղել Հիսուսը:

Հին քաղաքի Սիոնի դարպասի մոտ է Սուրբ Փրկիչ եկեղեցին, որի վերանորոգման աշխատանքները դեռ ավարտին չեն հասել: Եկեղեցու պարսպից ներս հայկական գերեզմանոցն է, ուր թաղված են մեծագույն պատրիարքներ եւ հոգեւոր գործիչներ: Սուրբ Հարություն տաճարը գտնվում է Հին Երուսաղեմի կենտրոնում: Հույն եւ լատին եկեղեցիների հետ հայ եկեղեցին այս տաճարի գլխավոր պահապանն է, որը այլազան եկեղեցիների ու մատուռների ամբողջություն է: Մինչեւ XIII դարը հայերին է պատկանել նաեւ Գողգոթան՝ Խաչելության վայրը, որից զրկվել են վրաց եկեղեցու խարդավանքների պատճառով: Դրա փոխարեն հայերը կառուցել են Երկրորդ Գողգոթա կամ Վերնատուն եկեղեցին, որի պատերին կան հայկական խաչանկարներ:

Պողիկոսոի եկեղեցին գտնվում է Հին քաղաքի Դամասկ դարպասից դուրս: Այստեղ ամփոփված են հայ զորականների աճյունները, որոնք բյուզանդական շրջանում հավանաբար զոհվել են հանուն հավատքի: Այստեղ պահպանվում է 4-րդ դարի հրաշալի խաչանկար՝ հայերեն արձանագրությամբ:

Գրքի վերջում հեղինակները կարեւոր են համարել վերջին հիշեցնել, որ գոյության երկհազարամյա պատմության ընթացքում Հայ Երուսաղեմն ունեցել է վերելքի ու անկումային պահեր, նաեւ կորուստներ: Դրանցից ամենածանրը, թերեւս, Չիթենյաց լեռան վանքի կորուստն է, որի տեղում այժմ կանգնած է ռուսական Իլիոնսկի (Չիթենյաց) կոչված վանքը: VII դարում կառուցված հայկական եկեղեցուց մնացել է միայն հայերեն արձանագրությամբ նրբակերտ խաչանկար:

Հայ Երուսաղեմն այսօր էլ դժվարին շրջան է ապրում... Բայց դա արդեն այլ թեմա է:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Պոլ Վոլֆովիցի Իրաք կատարած այցը ձախողվեց

Նրա մարտահրավերին իրաքցիները մարտահրավերով պատասխանեցին

Հոկտեմբերի 26-27-ին Բաղդադն ականատես եղավ ուժգին պայթյունների: Նախ հրթիռակոծվեց «Ալ Ռաշիդ» հյուրանոցը, որտեղ էին ամերիկացի զինծառայողներ եւ քաղաքացիական անձինք, այդ թվում նաեւ եռօրյա այցով Իրաք ժամանած ԱՄՆ պաշտպանության փոխնախարար Պոլ Վոլֆովիցը: Պայթյունի հետեւանքով զոհվեց ամերիկացի մի գնդապետ, 18 այլ անձինք վիրավորվեցին:

Թեեւ անվտանգության ուժերը իսկույն հյուրանոցի շենից դուրս բերեցին Վոլֆովիցին եւ նա հրթիռակոծությունից չտուժեց, սակայն դրան հետեւեցին 7 հզոր պայթյուններ, որոնք տեղի ունեցան հաջորդաբար, ընդամենը 45 րոպեի ընթացքում, ընդ որում՝ Բաղդադի կենտրոնական հատվածում, որը համեմատաբար ահաբեկչությունից պաշտպանված էր համարվում:

Ըստ նախնական տվյալների, առնվազն 47 մարդ, որոնց թվում օտարերկրացիներ, ամերիկացիներով հանդերձ սպանվեցին, իսկ 224-ը՝ վիրավորվեցին: Առաջին պայթյունը կատարվեց Կարմիր խաչի միջազգային կոմիտեի շենքի մոտ, մյուս 2-ը՝ առողջապահության եւ արդյունաբերության նախարարությունների առջեւ, որոնց հաջորդեցին 4 տարբեր ոստիկանատների մոտակայքում կատարված պայթյունները, ինչպես նաեւ ամերիկացի զինվորների անցման պահին ճանապարհին տեղադրված ռումբի պայթյունը:

Պայթյուններից հետո ամերիկացի զինվորները շրջապատել են Բաղդադի կենտրոնը, իսկ ամերիկյան վարչակարգի ներկայացուցիչները շտապել են հայտարարել, թե բավականաչափ հիմքեր չկան պնդելու, որ թիրախը հենց Վոլֆովիցն է եղել: Հարցը, սակայն, Վոլֆովիցը չէ, այլ Իրաքում ԱՄՆ-ի գլխավորությամբ կազմավորված կոալիցիան եւ այդ կոալիցիայի հետ համագործակցողները, որոնք էլ դարձան պայթյունների թիրախը: Թերեւս այդ առումով պատահական չէր շեյխ Աբդուլ Ջալիլ Իբրահիմի հայտարարությունը. «Մենք մահմեդականներ ենք: Մեզ համար ռամադանը սրբազան պատերազմի՝ ջիհադի ամիս է: Բոլորն էլ տեսնում են, որ մեր երկիրն օկուպացված է»:

Շեյխին լրացրել են Իրաքի կրոնական մյուս առաջնորդները՝ ընդգծելով. «Հարձակումները շարունակվելու են ոչ միայն Բասս կուսակցության հավատարիմ մարդկանց, այլեւ սրբազան ռամադանից ոգեշնչված երիտասարդների ակտիվ գործունեությամբ»: Սա նշանակում է, որ իրաքցիների դիմադրությունն ամերիկյան օկուպացիային համաժողովրդական բնույթ է ստանում: Վերջիններս տարեւային գործողություններից անցնում են կազմակերպված գործողությունների, եւ դրանք ամենայն հավանականությամբ մեկ կենտրոնից են ղեկավարվում:

Ուրեմն, պայթյունների պայմանավորումը Սադդամ Հուսեյնի կողմնակիցներով, ինչպես դա անում են ամերիկացիները, իրականությանը չի համապատասխանում: Ինչ վերաբերում է Վոլֆովիցին, ապա ակնհայտ է, որ եթե իրաքցիները հարձակումների թիրախ են դարձնում ԱՄՆ-ի գլխավորած կոալիցիայի հետ համագործակցողներին, առավել եւս պիտի փորձեին թիրախ դարձնել հակաիրաքյան պատերազմի գլխավոր ոգեշնչողին՝ համարելով նրան Իրաքի Ազատագրիչ Շարոն:

Հետեւաբար, ամերիկացիները ճիշտ չեն նաեւ Վոլֆովիցի հարցում: Հաստկապես այն դեպքում, երբ նա Իրաք էր ժամանում՝ ցույց տալու, որ երկիրը վերահսկվում է եւ ստեղծվում են նրա կայունության նախադրյալները, նախագահ Ջորջ Բուշի՝ ԱՄՆ Կոնգրեսին ներկայացրած 87 միլիարդ դոլար հավելյալ հատկացումների կատարման պահանջն արդարացնելու, ինչպես նաեւ Իրաքում ծառայող ամերիկացի զինվորների բարոյահոգեբանական վիճակը բարելավելու 3 գլխավոր առաջադրանքով:

Վոլֆովիցի այցելության առաջին օրը, ինչպես այդ մասին նշում է թուրքական «ենի շաֆաք» թերթը, Իրաքում սպանվում են 4 ամերիկացի զինվորներ, 17-ը՝ վիրավորվում: Նա Բաղդադից մեկնում է Սադդամի ծննդավայր Տիկրիթ, թերեւս դրանով էլ մարտահրավեր է նետում Իրաքի ժողովրդին: Վերադարձին նրան փոխադրող ուղղաթիռին ուղեկցող մեկ այլ ուղղաթիռ դառնում է գետնից արձակած հրթիռի թիրախ եւ ընկնում:

Պոլ Վոլֆովից

Երկրորդ օրը Բաղդադում հրթիռակոծվում է այն հյուրանոցը, որտեղ իջեւանել էր Վոլֆովիցը, իսկ երրորդ օրը տեղի են ունենում վերոհիշյալ 7 պայթյունները: Թուրքական հանրային հեռուստատեսությունը, անդրադառնալով հյուրանոցի հրթիռակոծությանը, ընդգծեց, որ Վոլֆովիցի ձայնը միջադեպից հետո, երբ հանդիպեց լրագրողներին, դողում էր: Այսինքն՝ միջադեպի ազդեցության տակ նա ցնցվել է: Ըստ երեւույթին, հրթիռակոծությանը հետեւող պայթյուններն էլ իբրեւ մարտահրավեր ցնցել են Սիրիան եւ Լիբանանը գրավելու մտադրությունները չթաքցնող Վաշինգտոնին: Այդ ընթացքում իրաքցի երեխաները տոնել են պայթյուններից բխող «հաղթանակը», ընդ որում այդ նույն կարգախոսներով, ինչ պաղեստինցի երեխաներն էլ հակաիսրայելական գործողություններից հետո են տոնում:

Այդ ամենը հիմք է տալիս ենթադրելու, որ Մերձավոր եւ Միջին Արեւելքում պաղեստինյան «Ինթիֆադան» համալրվում է իրաքցիների դիմադրությամբ, ե՛ւ մեկը, ե՛ւ մյուսը ծավալվում է «Պետական ահաբեկչության դեմ հանուն անկախության» համահունչ կարգախոսներով: Եթե Վոլֆովիցի Իրաք կատարած այցելության օրերին Բաղդադում կատարված պայթյունները այցի կատարյալ ձախողման վկայություններն են, իրաքյան դիմադրության ծավալումն էլ վկայում է Վաշինգտոնի ձախողումը: Ուրեմն, նա առաջիկայում, թեկուզ ժամանակավորապես կդադարի սպառնալ Իրանին եւ հանգիստ կթողնի ինչպես Սիրիային, այնպես էլ Լիբանանին:

ՀԱԿՈԲ ՉԱԲԲՅԱՆ

ԱՐԱԲ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Սիրիայի եւ Լիբանանի բանակները միավորվել են

Լիբանանի բանակի հրամանատարությունը երկուշաբթի ուշ երեկոյան հայտարարել է, որ Լիբանանը Սիրիայի հետ համաձայնության է եկել Իսրայելին դիմակայելու ուղիների շուրջը: Սիրիայի եւ Լիբանանի բանակները միավորվել են երկու երկրների դեմ ուղղված «թշնամական սպառնալիքների դեմ-հանդիման»:

«Գազետա» ինտերնետային հրատարակության տվյալներով, Իսրայելում պատրաստվում են պատերազմի պաշտոնական հայտարարմանը: Հաղորդվում է, որ Սիրիայի բանակի գլխավոր շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Հասան Թուրքմանին արտահերթ հանդիպում է ունեցել Լիբանանի նախագահ Էմիլ Լահուդի եւ լիբանանցի բարձրաստիճան զինվորականների հետ:

Ընդունված հայտարարության մեջ նշվում է, որ «միասնական դոկտրինա» է մշակվել «երկու երկրներին սպառնացող իսրայելական նախահարձակումը կասեցնելու նպատակով»:

Փաստաթղթի ընդունումից մի քանի ժամ առաջ լիբանանյան «Հզբոլլահ» ահաբեկչական կազմակերպության մարտիկները Գոլանի բարձունքների վիճելի շրջաններից մեկում ականակոծել եւ հրթիռակոծել էին իսրայելական բանակի դիրքերը: Իսրայելական զորքերը հակադարձել էին: Երկու կողմերի կորուստների մասին չի հաղորդվում: Սակայն Բեյրութում եւ Դամասկոսում առկա են երկյուղներ, թե Իսրայելի բանակը կարող է էլ ավելի ծավալել պատասխան գործողությունները եւ հարձակման անցնել:

Սիրիա-իսրայելական հարաբերություններում լարվածությունն աճեց հոկտեմբերի 5-ի դեպքերից հետո: Ժամանակին «Ազգը» տեղեկացրեց այդ օրվա իրադարձությունների մասին (իսրայելական օդուժը հարվածել էր Դամասկոսի արվարձանում գտնվող պաղեստինյան գաղթականներին): Անցյալ շաբաթ Հասան Թուրքմանին սիրիական զորքերին հրամայեց պատրաստ լինել հետ մղելու իսրայելցիների հարձակումը, քանզի Իսրայելի կառավարության որոշ անդամներ հանդես էին եկել սպառնալիքներով:

Իսրայելի պաշտպանության նախարար Շաուլ Մոֆազն իր հերթին հայտարարեց, թե Իսրայելը չի սպառնում Սիրիային, մինչդեռ Դամասկոսում մտածում են Իսրայելին պատերազմ հայտարարելու մասին:

Երկու երկրների հարաբերություններում լարվածության շիկացում թույլ չտալու նպատակով ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելը երեկ Սիրիային եւ Իսրայելին կոչ արեց վերջ դնել փոխադարձ սպառնալիքներին:

Կարմիր խաչն Իրաքից դուրս է բերում օտարերկրացի աշխատակիցներին

Կարմիր խաչի միջազգային կոմիտեն որոշել է Իրաքից դուրս բերել իր օտարերկրացի աշխատակիցներին: Երեկ արդեն Բաղդադից մեկնել է 35 մարդ: Այդ մասին Իրաքում ԿԽՄԿ խմբի ղեկավար Պիեռ Գասմանը հայտարարել է ՁԼՄ-ների ներկայացուցիչներին:

«Ալ Ջազիրա» հեռուստաընկերությունը հաղորդում է, որ ԿԽՄԿ որոշումն ընդունվել է Բաղդադում երկուշաբթի օրը տեղի ունեցած մի շարք ահաբեկչություններից հետո, որոնք չորս տասնյակ զոհեր պատճառեցին: Պայթյուններից մեկը տեղի էր ունեցել հենց ԿԽՄԿ ներկայացուցչության մոտ: Տեղական աղբյուրների համաձայն, այդ պայթյունից զոհվել է 12 մարդ, 22-ն էլ վիրավորվել են:

Տարբեր լրատվամիջոցների հաղորդումների համաձայն, երկուշաբթի օրը Բաղդադում տեղի ունեցած 6 պայթեցումների հետեւանքով ընդամենը զոհվել են 42 անձինք, 224-ն էլ վիրավորվել են: CNN-ի տվյալներով, զոհերից 8-ն իրաքցի ոստիկաններ են, մեկը՝ ամերիկացի զինծառայող: Մյուսները խաղաղ բնակիչներ են:

Մինչ այդ Կարմիր խաչի շենքը երբեւէ չէր դարձել անձնասպանական ահաբեկչության թիրախ: Միայն ԿԽՄԿ առանձին աշխատողներ սպանվել էին փոխհրաձգությունների ժամանակ: ԿԽՄԿ շենքի առջեւ ավտոմեքենայի պայթեցումը, կազմակերպության մամլո քարտուղար Անտոնելլա Նոտարիի խոսքերով, «կանխամտածված հարձակում է մեր աշխատանքի, մեր խորհրդանշանի վրա»:

Իրաքում Կարմիր խաչը գործում է 1980 թվականից: «Այսօր մենք չենք կարող ստույգ ասել՝ կմնա՞նք արդյոք այս երկրում», հայտարարել է Նոտարին, նշելով, որ խոսքն առայժմ միայն ԿԽՄԿ օտարերկրացի աշխատակիցների դուրսբերման մասին է:

Հնարավոր ահաբեկչությունների վտանգը նկատի ունենալով ԿԽՄԿ-ն օգոստոսին Իրաքում արդեն կիսով չափ կրճատել էր անձնակազմը:

Պ. Բ.

Նոյեմբերի 2-ին խորհրդարանական ընտրություններ Վրաստանում

Սկիզբը էջ 1

«Բուրջանաձե-ժողովրդավարներ» դաշինքը գլխավորում են գործող խորհրդարանի նախագահ Նինո Բուրջանաձեն, խորհրդարանի նախկին նախագահներ Ակակի Ասաթիանին («Ավանդապահներ» կուսակցության առաջնորդ) եւ Զուրաբ Ժվանիան («Միացյալ ժողովրդավարների» առաջնորդ): Եթե վստահենք այս օրերին հրապարակվող տարբեր սոցիոլոգիական հարցումներին, ապա ընտրությունները կշահի հենց այս դաշինքը: Ունի հստակ առաջատարություն դիրքորոշում, միաժամանակ կողմնակից է Ռուսաստանի հետ հարաբերությունների բարելավմանը: Բուրջանաձեի եւ Ժվանիայի մայրերի հայ լինելը կարելի է համարել դաշինքի խոցելի տեղերից, քանի որ ազգայնամոլությամբ հիվանդ Վրաստանում թեկուզ մորական կողմից հայ լինելը երբեմն ընկալվում է որպես «մահացու մեղք»: «Բուրջանաձե-ժողովրդավարներ» դաշինքում հայերը ներկայացված են պատշաճ կերպով. Մելիք Ռախյանը ցուցակի 24-րդ, իսկ Հենրիխ Սուրադյանը («Վրաստանի հայերի միության» նախագահ) 29-րդ տեղում են:

«Ժողովրդավարական վերածննդի միություն» կամ «Աղորձինեբա» կուսակցությունը ղեկավարում է Աջարիայի առաջնորդ Ասլան Աբաշիձեն, որը տասը տարուց ավելի չի ժամանում Թբիլիսի: Աբաշիձեն տարբեր առիթներով նշել է, որ նախագահ Շեւարդնաձեի հրահանգով իր դեմ կազմակերպվել են մի քանի մահափորձեր: «Աղորձինեբայի» հիմնական ընտրազանգվածը Աջարիայում է, ինչը նշանակում է, որ այս կուսակցությունը ընտրություններում կստանա քվեների առնվազն 10 տոկոսը: «Աղորձինեբան» ունի հստակ ռուսամետ կողմնորոշում, ինքնավար հանրապետության տարածքում տեղաբաշխված է ռուսական 12-րդ ռազմակայանը: «Աղորձինեբայի» համամասնական ցուցակում ներկայացված են երկու հայեր՝ Արմեն Գեւորգյանը՝ 40 համարի տակ, Սաշա Ալեքսանյանը՝ 55: Մեր ունեցած տեղեկություններով, Ջավախքի հայության մի սվար զանգված քվեարկելու է «Աղորձինեբայի» օգտին:

«Սահակաշվիլի-Ազգային շարժում» դաշինքի առաջնորդը հայ լինելու մեջ «կասկածվող» Միխայիլ Սահակաշվիլին է, իսկ համամասնական ցուցակը գլխավորում է մեկ այլ «հայ»՝ Կոբա Դավիթաշվիլին: Դաշինքն ունի ընդգծված ամերիկամետ դիրքորոշում, ինքը՝ հաճախ ծեծկռտուքների կիզակետում հայտնվող Սահակաշվիլին կասկածվում է հայկական լոբբիստական շրջանակների հետ համագործակցության մեջ: Դաշինքում ներկայացված չէ եւ ոչ մի հայ: 35-ամյա Սահակաշվիլին, որն արդեն հասցրել է լինել Վրաստանի արդարադատության նախարար, հայտարարում է, որ իշխանության գալու դեպքում բանտարկելու է այսօրվա իշխանավորներից շատերին:

Լեյբորիստական կուսակցության առաջնորդ Շալվա Նաթելաշվիլին ամերիկամետ է, հաճախ է օգտագործում «ցեղասպանություն» տերմինը, երբ նկարագրում է նախագահ Շեւարդնաձեի քաղաքականությունը վրաց ժողովրդի հանդեպ: «Իշխանությունը մաքրենք գողերից»՝ այս կարգախոսով 43-ամյա իրավաբան Նաթելաշվիլին հաղթեց 2001 թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում: Նաթելաշվիլին ծայրահեղ պոպուլիստ է, կուսակցության հիմնական ընտրազանգվածը սոցիալապես անապահով խավն է: Լեյբորիստների կուսակցական ցուցակում հայեր ընդգրկված չեն:

«Նոր աջեր» դաշինքի առաջնորդ Դավիթ Գամդրելիձեն, ինչպես Զուրաբ Ժվանիան, Նինո Բուրջանաձեն, Միխայիլ Սահակաշվիլին, մյուս երիտասարդ բարեփոխիչները, նախագահ Շեւարդնաձեի աճեցրած կադրերից է: «Նոր աջեր» կուսակցության առաջնորդները բիզնեսի մարդիկ են, ունեն ընդգծված ամերիկամետ դիրքորոշում: Դաշինքում հայեր ընդգրկված չեն:

«Արդյունաբերությունը կփրկի Վրաստանը» քաղաքական շարժման առաջնորդները, ինչպես «Նոր աջերը», բիզնեսի մարդիկ են, բայց, ի տարբերություն վերջիններիս, ունեն ավելի շատ ռուսամետ դիրքորոշում, Ռուսաստանին համարում են Վրաստանի կարեւորագույն տնտեսական գործընկերներից: Դաշինքը գլխավորում է Վրաստանում հայտնի գործարար Գոգի Թոփաձեն: «Արդյունաբերությունը կփրկի Վրաստանը» կուսակցության կողմից Ախալքալաքում առաջադրված է մեծամասնական Մերուժան Եզոյանի թեկնածությունը:

«Զուգբեր Պատիաշվիլի-Միասնություն» քաղաքական միավորումը գլխավորում է խորհրդային Վրաստանի կոմկուսի վերջին առաջին քարտուղար Զուգբեր Պատիաշվիլին, որը հաճախ է այցելում Մոսկվա եւ չի թաքցնում իր ռուսամետ դիրքորոշումը: 1989 թ. ապրիլի 9-ին, երբ խորհրդային զորքը ուժ գործադրեց Թբիլիսիի խաղաղ ցուցարարների դեմ, Պատիաշվիլին հրաժարական տվեց: 2000 թ. մասնակցել է նախագահական ընտրություններին եւ պարտվել գործող նախագահ Շեւարդնաձեին: Ի դեպ, 2000 թ. նախագահական ընտրությունները տեղի ունեցան հենց ապրիլի 9-ին:

Սոցիոլոգիական տարբեր հարցումների համաձայն, վերոնշյալ ութ կուսակցությունները եւ դաշինքները հնարավորություն ունեն հաղթահարելու 7 տոկոս արգելքը:

Ընտրություններին մնացել է ընդամենը 5 օր, սակայն ընտրացուցակները դեռեւս վերջնական տեսքի չեն բերվել, ինչը ընդդիմադիր կուսակցությունների առաջնորդներին, ոչ կառավարական կազմակերպություններին հիմք են տալիս ենթադրելու, որ ընտրությունները կեղծվելու են հօգուտ կառավարամետ «Հանուն նոր Վրաստանի» դաշինքի:

Մշակույթ

Նոր ժամանակներ են եկել

ՀՀ նկարիչների միության 16-րդ համագումարում

Պարզվում է, որ Հայաստանի նկարիչների միությունն ունի 1100-ից ավելի անդամ, որից գոնե 750-ն այսօր Հայաստանում է: Պատկերացնո՞ւմ եք, որ Չինաստանի նկարիչների միությունն ունի ընդամենը... 7 միլիոն անդամ: Դե, հիմա գումարենք, բաժանենք եւ տեսնենք, թե մենք ենք ավելի նկարիչ ժողովուրդ, թե չինացիները: Ի դեպ, մեր միության անդամների ցուցակում, չգիտես ինչու, չկան ընտրական կենտրոնական կամ մարզային հանձնաժողովների շատ անդամներ, որը զարմացրել էր Հայաստանի նկարիչների միության երեկ հրավիրված 16-րդ համագումարի մասնակիցներին: Ամեն դեպքում, համագումարն սկսվեց եւ այսօր էլ կշարունակվի:

Արդեն մի քանի տարի ստեղծագործական, այդ թվում նաեւ նկարիչների միության անդամները վիճում են. մեզ պե՞տք են միությունները, եւ եթե պետք են ապա այդ ձեւո՞վ ու այս գործունեությա՞մբ:

Համագումարից առաջ եւ հենց ընթացքում մենք զրուցեցինք միության մի շարք անդամների հետ:

Արվեստաբան **Հենրիկ Իգիթյանը** մեր զրույցի ժամանակ ասաց, որ շարունակվում է այն ավանդույթը, ինչ ստեղծվել է սովետական իշխանության օրոք: Այսպիսի միություն պիտի որ լինի, ուր կհավաքվեն արվեստագետները: «Ուրիշ հարց, ասաց արվեստաբանը, որ պետք է փոխվի միության ոճը, ինչպես եւ երկիրն է փոխվել: Ես հիմա չեմ կարող տալ միության ռացիոնալ ձեւը, բայց պետք է բացառել պայքարն անձերի միջեւ, եւ այն դառնա ծրագրերի պայքար: Այսինքն՝ մենք միության ղեկավարություն ընտրելիս պետք է հաշվի առնենք միությանն ընդհանրապես եւ միության յուրաքանչյուր անդամի ստեղծագործական գործունեությանը նպաստող ծրագիրը: Մեզ մոտ (եւ ոչ միայն՝ նկարիչների միությունում) միշտ լինում է պատերազմ անձերի համար եւ անձերի միջեւ: Դա, իհարկե, ամենամեծ սխալն է»:

ՀՀ նկարիչների միության նախկին նախագահ **Արա Շիրազն** ասաց.

- Ձեր հարցի առիթով հիշեցի մեկ դեպք. Փարաջանովի հետ գնացել էինք Բջնի, որտեղ եկեղեցում տեսանք ալյումինե, էժանագին մի լուսամփոփ: Երբ տեր հորն ասացինք, որ այստեղ, այս եկեղեցում չի սազում սովետական արտադրության այս լուսամփոփը, նա պատասխանեց. «Երբ այս լուսամփոփի փոխարեն նորը կբերվի, այն ժամանակ արդեն կարելի կլինի մտածել փոխելու մասին»: Այսպես է նաեւ մեր միության պարագայում: Վերջին տարիներին, երբ Հայաստանն արդեն անկախացել է, միության կազմակերպական որեւէ նոր ծրագիր չի առաջարկվել: Երբ կլինի այդ նոր ծրագիրը, ապա կմտածենք նոր որակի կամ տեսակի միության ստեղծման մասին:

Հովհաննես Հարությունյանը մեր ժամանակի այն նկարիչներից է, որը ոչ միայն ստեղծագործական անընդհատ պրոցեսում է, այլ զբաղվում է հայ նկարիչների համաշխարհային հասարակությանը ներկայացնելով: 10 տարուց ավելի Փարիզում գտնվող կենտրոնի միջոցով Հովհաննես Հարությունյանն աշխարհի խստապահանջ արվեստագետներին է ներկայացրել իր եւ իր ընկերների գործերը՝ սատարելով ոչ միայն նյութական հարցերը հոգալու, այլեւ միջազգային ճանաչման արժանանալու համար:

- Նկարիչների միությունը մեզ ընդհանրապես պետք է,- ասաց Հովհաննես Հարությունյանը,- որն ափսոս է կորցնել: Բայց մասնակի փոփոխություններ անպայման պետք են, որովհետեւ հիմա ժամանակներն այլ են: Իհարկե, սովետական ժամանակներում միությունը շատ ու շատ սոցիալական հարցեր էր լուծում: Այժմ էլ դա կարելի է անել, առանց սպասելու պետության կամ որեւէ հովանավորի օգնությանը: Թող տարօրինակ չթվա, եթե ասեմ, որ միությունն արտադրանք տվող կազմակերպություն է, եւ կարելի է միջոցներ ստեղծել նկարչին ապահովելու համար: Իհարկե, սա այսպես ասած «հորիզոնական» մոտեցումն է, երբ բոլոր նկարիչներին, գոնե միության անդամներին պետք է ինչ-որ չափով օգնել: Բայց, իհարկե, «ուղղահայաց» մոտեցումը, որի դեպքում որոշվում է յուրաքանչյուր ստեղծագործողի ինքնությունը, իսկական արժեքը: Ափսոս է այս միությունը կորցնել:

Գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր, նկարիչ **Արամ Իսաբեկյանը** նույնպես կողմ է միության մոդելը փոխելուն:

- Եվրոպական մի քանի երկրներում գործում է ապահովագրության ձեւը,- ասում է պրոֆեսոր Իսաբեկյանը:- Նկարիչների միության անդամներն ամեն ամիս կամ ամեն տարի որոշակի չափով գումար են մուծում միության օգտին, եւ եթե գալիս է մի ժամանակ, երբ նրանցից որեւէ մեկը ստեղծագործելու կամ ցուցադրվելու հնարավորություն չի ունենում այլեւս, ապա նրան միջոցներ են տրամադրվում այդ ֆոնդից:



ՀՀ նկարիչների միության նախագահ **Կարեն Աղամյանը** ժուռնալիստների հարցերին պատասխանելիս նշեց, որ իր ղեկավարության տարիներին արված շատ ու շատ գործերի շարքում հիմնական ուշադրությունը դարձվել է նաեւ միության ֆոնդի պահպանմանը: Այն տասնամյակներ շարունակ հայ նկարիչների եւ քանդակագործների համար եղել է հիմնականում նյութամատակարար կազմակերպությունը: Գործելով պետական հովանավորչության տակ, այն զգալի դեր է կատարել մեր մշակույթի այս ոլորտի ոչ միայն պահպանման, այլեւ զարգացման համար: Թեկուզ ուրիշ ձեւով, այս ֆոնդը պետք է վերականգնել, համոզված է միության նախագահը:

Համագումարն սկսվեց, ինչպես կարգն է, ՀՀ հիմնով, ՀՀ նախագահի, ՀՀ Ազգային ժողովի նախագահի, ՀՀ ԳԱ պրեզիդենտի ուղերձներով: ՀՀ մշակույթի նախարար տիկին **Թամար Պողոսյանն** ինքն անձամբ էր եկել եւ ողջունեց համագումարի մասնակիցներին: Նա մասնավորապես ասաց.

- Հիրավի, սա իրադարձություն է մեր մշակութային կյանքում, ես կասեի՝ ավելին, ընդհանրապես մեր հայ ժողովրդի կյանքում: Այսօր հավաքվել է այս դահլիճում մեր մշակութային, կերպարվեստի, ընդհանրապես մեր հասարակության սերունդը, սերունդի մի հատվածը: Եվ ինչու չէ, եկեք հպարտանանք նրանով, որ աշխարհում իսկապես մենք հարուստ ենք սրանով: Այս դահլիճն իսկապես ներկայացնում է մեր մեծ ազգային ժառանգության, մեր արվեստի, եւ ինչու չէ՝ համաշխարհային մշակույթի լավագույն հատվածը:

Ապա տկն նախարարուհին, ինչու չէ, խոստովանեց, որ անցումային շրջանն իր հետքը թողեց նաեւ այս ոլորտում եւ զուցե մշակույթը չարժանացավ այն ուշադրության, որին խորապես արժանի էր: Բայց կարծես թե հետեւում են մնում այն ժամանակները, երբ մշակույթը երկրորդացվում էր:

Ապա դահլիճում նստած «մեր հասարակության սերունդի մի հատվածն» ուշադրությամբ լսեց միության նախագահ Կարեն Աղամյանի զեկուցումն անցած 5 տարիներին միությունում կատարված աշխատանքների մասին: Իհարկե, նկարիչների միության աշխատանքների մասին վերջին ժամանակներս մամուլն այնքան է խոսել (տպագրելով անչափ ծայրահեղ հոդվածներ), որ համագումարի մասնակիցներին ավելի շատ այդ լուրերի հերքումն ու հաստատումն էր պետք: Սակայն, անկախ հրապարակումներից, միության նախագահությունն զգալի գործ է կատարել: Պետք է հաշվի առնենք, որ խորհրդային տարիների պետական հովանավորությունից հետո, այսօր նկարիչների միությունն ու քանդակագործներն այսպես ասած «միայնակ են մնացել» ազատական հարաբերությունների բաց դաշտում: Եվ հնարավոր ամեն ինչ արվում է, որպեսզի այս կառույցը սատար լինի արվեստագետներին: Կրկին ցուցահանդեսներ կազմակերպվում են, կրկին նկարիչներն իրենց գործերի հետ գնում են արտասահման:

Միակ դժվարությունը կրկին մնում է պետական հովանավորությունը, գոնե պետության կողմից հոգատարության ցույցեր անելը:

Կրկին ելույթ ունեցան համագումարի մասնակիցները, ովքեր ոչ միայն քննարկեցին միության նախագահի ելույթը, այլեւ հայ նկարչության եւ քանդակագործության այսօրվա վիճակը:

Աղվան Հունանյանն, օրինակ, ասաց, որ «երբ չկա մշակույթ, ապա լինում է ոչխարաբուծություն»: Դժգոհելով մշակույթի բարձրաստիճան ղեկավարներից՝ նա նշեց, որ «երկրի առաջին դեմքը, միեւնույն է, արվեստագետն է մնում»:

Արվեստաբան Հենրիկ Իգիթյանը նշեց, որ անցած ժամանակներում նկարիչների համագումարներին ներկա էին լինում երկրի ամենաբարձրաստիճան իշխանավորները: Իսկ այս անգամ մշակույթի նախարարը մի կարճ ժամանակով ներկա եղավ, ողջունեց ու գնաց: Մի՞թե նկարիչների միությունը հոգսեր, դժվարություններ չունի, որին պետք է ծանոթանա տկն նախարարուհին հենց իրենցից: Ու, որպեսզի ամեն ինչ իր տեղն ընկնի՝ նկարիչներից մեկը խորհուրդ տվեց ժուռնալիստներին այս բոլոր հոգսերի մասին մանրամասն տեղեկացնել:

Անկեղծ ասած, ավելի փոքրակուլիս համագումար էր սպասվում՝ ծանոթ լինելով նախահամագումարյան ելույթներին: Փառք Աստծո, համագումարի առաջին օրը խաղաղ անցավ:

Այսօր համագումարը կշարունակի իր աշխատանքը:

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ-100

Մեծ շուքով նշվել է Լոնդոնում

Բենլյան տրաստի, Սբ. Սարգիս բարեգործական տրաստի եւ Լոնդոնի ՀԲԸՄ-ի տրաստի հովանավորությամբ Մեծ Բրիտանիայի «Գրանդ Ռոջերս մյուզիքլ արտիստս մենեջմենտ» ընկերությունը հոկտեմբերի 13-ին Լոնդոնի «Ռոյալ Ֆեստիվալ հոլում» կազմակերպել է Արամ Խաչատրյանի ծննդյան 100-ամյակին նվիրված համերգ, որի ընթացքում Լոնդոնի Ֆիլհարմոնիկ նվագախումբը ելույթ է ունեցել Ջորջ Փեթիվանյանի ղեկավարությամբ: Այս մասին հաղորդում է Լոնդոնից Ասատուր Կյուզելյանը, հավելելով, որ ծրագիրը բաղկացած էր սուիտներից՝ «Գայանե» եւ «Սպարտակ» բալետներից, ինչպես նաեւ հատվածներից՝ «Դիմակահանդեսից»: Գերազանցապես հուզիչ երեկո էր հատկապես դահլիճում ներկա հայերի համար, որոնք հիշում էին մեծ երգահանի երկու այցելությունները Լոնդոն, որոնց ընթացքում նա անձամբ ղեկավարել էր իր համերգները «Ռոյալ Ֆեստիվալ հոլում» եւ «Ռոյալ Ալբերտ հոլում»: Դա նաեւ հպարտանքի երեկո էր, քանզի նվագախմբի ղեկավարն ու մենանվագներ կատարողները հայեր էին՝ Լեւոն Չիլինգարյան, Սերգեյ Խաչատրյան, Ալեքսանդր Չաուշյան եւ Ջորջ Փեթիվանյան:

Ծրագիրը կատարվեց խաչատրյանական շնչի ու ոգու ճիշտ ըմբռնումով եւ բոլորովին զարմանալի չէր, որ հանդիսատեսը բուռն ծափահարություններով ընդունեց կատարողներին:

Խմբավար Ջորջ Փեթիվանյանը միջազգային ճանաչման արժանացավ 1991-ին, երբ 27 տարեկանում դարձավ առաջին ամերիկացին, որ «Բեսանկոն» խմբավարական հեղինակավոր մրցանակաբաշխության ժամանակ տիրեց Մեծ մրցանակին: Դրանից հետո ամրապնդելով իր դիրքերը՝ ղեկավարել է աշխարհի խոշորագույն նվագախմբերը՝ Լոնդոնում, Իտալիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Հոլանդիայում, Կանադայում, Մ. Նահանգներում, Ռուսաստանում, Ավստրալիայում եւ Վիեննայում:

Լեւոն Չիլինգարյանը ծնվել է Կիպրոսում եւ ներկայումս Լոնդոնի երաժշտական արքայական քոլեջի պրոֆեսոր է: Հիմնել է Չիլինգարյան քառյակը, որը մեծ ճանաչում է ձեռք բերել ամբողջ աշխարհում: Վերջերս նա դարձել է նաեւ «Կամերատա Ռոման» խմբի երաժշտական տնօրենը եւ 2000 թ. նրան պարգեւատրել է թագուհին:

Ալեքսանդր Չաուշյանը ծնվել է Հայաստանում 1977-ին: 1990-ին առաջին մրցանակ է շահել Վերոնայի՝ Մոցարտի, իսկ 1992-ին՝ Հոլանդիայի միջազգային երաժշտական մրցանակաբաշխություններում: Համերգներով հանդես է եկել Մ. Նահանգներում, Ֆրանսիայում, Բելգիայում, Կիպրոսում, Իսպանիայում, Իտալիայում եւ Ճապոնիայում: Արժանացել է նաեւ բազմաթիվ այլ մրցանակների:

Սերգեյ Խաչատրյանը ծնվել է Երեւանում 1985-ին: 2000 թ. առաջին մրցանակ է վաստակել Յան Սիբելիուսի (Հելսինկի) միջազգային մրցանակաբաշխությունում՝ դառնալով այդ կազմակերպության պատմության մեջ ամենաերիտասարդ մրցանակակիրը:

Հ. Ծ.

Երեւանում էր Կարո Նշանյանը

Օրերս Արամ Խաչատրյանի տունթանգարանի համերգասրահում կայացավ կանադահայ ճանաչված երգիչ Կարո Նշանյանի (բաս-բարիտոն) մենահամերգը, որը կազմակերպել էր «Նոր անուններ» ծրագրի նախաձեռնող խումբը:

«Ազգ»-ի թղթակցի հարցին, թե ովքեր են նախաձեռնող խմբի անդամները, «Նոր անունների» ղեկավար, արվեստի վաստակավոր գործիչ Սիլվա Մեհինյանը պատասխանեց. «Վերջին մեկ տարում «Նոր անունների» պատանի կատարողները երկու անգամ հրավիրվեցին Կանադա, ուր Մոնրեալում, հյուրընկալների թվում էր նաեւ Կարո Նշանյանը՝ մաս կազմելով պոլսահայ միությանը»:

Պատանի երաժիշտները «հայտնաբերելով», որ իրենց հյուրընկալը ոչ միայն հայ համայնքում հարգանք ունեցող մի կազմակերպիչ է, այլեւ արվեստագետ երգիչ, Նշանյանին հրավիրեցին երեւան՝ հանդես գալու մենահամերգներով:

«Երկար ատեն երգած չէի, չէի համարձակի երեւանյան ունկնդրի առջեւ հանդես գալ, սակայն այս պատանիներն այնքան խանդավառեցին զիս, որ չկրցա դիմակայել:

Ամեն բան իրենք ըրին, դահլիճ, հրավիրատոմս, գովազդ, գտան երգչուհի զուգընկեր, որը ինձի համար հայտնություն դարձավ: Զավակներս պես սիրեցի այս տաղանդաշատ տղաքը եւ կզգամ, որ ցավով պետք է բաժնվիմ անոնցմէ»:

Կարո Նշանյանը բազմաթիվ մենահամերգներով հանդես է եկել Կանադայի եւ ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում, բարձր գնահատվել երաժշտասեր հասարակայնության կողմից: Նա ելույթներ է ունեցել այնպիսի հեղինակավոր բեմերում, ինչպիսիք են «էյվերի Ֆիշեր», «Սահմանադրական» սրահները, «Ֆլորենս Գուլդ» լսարանը, Մետրոպոլիտեն արվեստի թանգարանը, Արվեստների հրապարակը, Մոնրեալի Օլիմպիական մարզադաշտը, «Կլոդ շամպայն», «Օսկար Պիտերսոն» համերգասրահները եւ այլն:

Նշանյանը մասնագիտական կրթությունը ստացել է Կանադայում՝ կատարելագործվելով իտալացի հանրաճանաչ պրոֆեսոր Լինա Նարդուչի մոտ: Բնատուր հարուստ եւ զորեղ ձայնով օժտված արվեստագետը, նրբազգաց երաժշտականությամբ հանդերձ, ունկնդիրներին ներկայանում է իր ճոխ ու բազմալեզու երգացանկով, որն ընդգրկում է օպերային մեներգեր, հայրենասիրական ու ռոմանտիկ երգեր: Վերջերս թողարկվել է նրա «Ցայգերգ» That's life լազերային ձայնասկավառակը, որը հայ եւ դասական մեղեդիների միջոցով ակներեւ է դարձնում արվեստագետի տաղանդը:

Նշանյանի համերգն ունեցավ բացառիկ հաջողություն: Դահլիճում էին նաեւ օտար, ոչ հայ հյուրեր, որոնք նույնպես մեծապես գնահատեցին Նշանյանի արվեստը:

Որպես զուգընկեր համերգին մասնակցում էր նաեւ Երեւանի Կոմիտասի անվան պետկոնսերվատորիայի ասպիրանտ, միջազգային մրցույթների դափնեկիր, օպերային ստուդիայի մենակատարուհի Նարինե Օջախյանը (սոպրանո), որը ոչ միայն իր բացառիկ ձայնային տվյալներով, այլեւ թատերականացված կատարումներով (համահունչ իր զուգընկերոջը) հավելյալ փայլ ու նրբերանգներ տվեց համերգին: Կատարվեցին Վերդիի, Կաչինիի, Գաստալդոնի, Մոցարտի եւ արեւմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններ, իսկ համերգի պսակը կազմեցին հայ դասականների՝ Կոմիտասի, Կանաչյանի, Չուխաջյանի, Ռոմանոս Մելիքյանի, Ալան Հովհաննեսի գործերը: Համերգի կատարելությունը լրացրեց նվագակցողներ Աննա Խաչատրյանի եւ Լուիսա Պողոսյանի վարպետությունը:

Հայաստանի ունկնդիրը սիրով է սպասում սփյուռքահայ արվեստագետների այցելություններին, որոնք, ցավոք, եզակի են:

Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հովսեփ Ասատրյանը 80 տարեկան է

Լրացավ հայկական ֆուտբոլի անվանի վետերաններից մեկի Հովսեփ Ասատրյանի ծննդյան 80-ամյակը: Նա Հայաստանի ֆուտբոլային այն սերնդի ներկայացուցիչներից է, ով իր խաղընկերների՝ Սերգեյ Զատիկյանի, Հայկ Կարմիրյանի, Մանուկ Սեմերջյանի, Հակոբ Չալիկյանի, Ի. Սիչ Մկրտչյանի, Հարություն Քեհեյանի, Քաջայր Փոլադյանի, Արյուրա Քելեջյանի, Հակոբ եւ Արմենակ Դուրգարյան եղբայրների, Վիկտոր Մերկուլովի, Հմայակ Մխոյանի, Պետրոս Գավլախյանի, Իշխան Բեգլարյանի հետ բախտ է ունեցել Երեւանի «Դինամոյի» կազմում 1949 թ. առաջինը ներկայացնել հայկական ֆուտբոլը նախկին ԽՍՀՄ-ի բարձրագույն խմբի առաջնությունում:

Հովսեփ Ասատրյանը ծնվել է Թուրքիայում, որտեղ էլ իր ֆուտբոլային առաջին քայլերն է կատարել: 1944 թ. ավարտել է Կիրովոսի Մելգոնյան կրթական հաստատությունը, այդ ուսանել Բեյրութի ամերիկյան համալսարանում, որի թիմի կազմում էլ խաղացել է՝ միաժամանակ մարզելով տեղի «Բաղդասյան» ֆուտբոլային ակումբի ֆուտբոլիստներին: 1946 թ. տեղափոխվելով Հայաստան, Հովսեփ Ասատրյանն ընդգրկվեց Երեւանի «Դինամոյի» վարպետների կազմում՝ 10 տարի շարունակ հանդես գալով թիմի կիսապաշտպանական օղակում: Տարիների ընթացքում փորձ ու հմտություն ձեռք բերելով, նա դարձավ թիմի առանցքային խաղացողներից մեկն՝ աչքի ընկնելով հուսալի խաղով, տեխնիկական պատրաստությամբ, լավ տիրապետելով գլխով խաղին: Եվ պատահական չէ, որ նրան շուտով վստահեցին թիմի ավագի թեւկապը: 1951-1955 թ. Հովսեփ Ասատրյանն էր իր թիմակիցներին խաղադաշտ դուրս բերում: 1954 թ. Երեւանի «Սպարտակի» կազմում նա մասնակցեց Կիեւի «Դինամոյի» հետ գավաթի եզրափակիչ հանդիպմանը (կրկին որպես թիմի ավագ) եւ արժանացավ ԽՍՀՄ սպորտի վարպետի կոչմանը: Ավարտելով ելույթները մեծ ֆուտբոլում, նա անցավ մարզչական աշխատանքի՝ մարզելով Երեւանի «Սպարտակ», «Նաիրի», Հոկտեմբերյանի «Սեւան» թիմերը: Մարզչական գործունեությամբ է զբաղվել նաեւ Սիրիայում ու Լիբանանում:

Հովսեփ Ասատրյանը
Արկադի Անդրեասյանի հետ:

«Արարատի» վերելքի տարիներին՝ 70-ական թվականներին Հովսեփ Ասատրյանը Հայաստանի սպորտկոմիտեի ֆուտբոլի պետական մարզիչն էր եւ իր ներդրումն է ունեցել թիմի հաջողություններում: Այնուհետեւ նա սպորտկոմիտեում զբաղեցնում էր ազգաբնակչության ֆիզիկական դաստիարակության վարչության պետի պաշտոնը: 1989 թ. Հովսեփ Ասատրյանը մեկնեց ԱՄՆ՝ բնակություն հաստատելով Լոս Անջելեսում: Այս օրերին, երբ նշվում էր «Արարատի» փառապանծ հաղթանակի 30-ամյակն, անվանի վետերանն, անշուշտ, հոգով իր հարազատ թիմակիցների հետ էր եւ հաճելի շատ պահեր ունի վերհիշելու: Անվանի վետերանին մաղթում ենք ամենայն բարիք:

«Ադիդասը» զիջում է դիրքերը

Ֆուտբոլային հանդերձանքը յուրաքանչյուր ակումբի համար կարեւորագույն հարցերից մեկն է: Տարբեր ֆիրմաների խորհրդանշաններով հանդես եկող ֆուտբոլիստները բավական եկամուտ են բերում իրենց ակումբներին: Գերմանիայում հանդերձանքի շուկայում կատաղի մրցակցություն է ընթանում ամերիկյան «Նայք» եւ գերմանական «Ադիդաս» ֆիրմաների միջեւ: Գերմանական ֆուտբոլի ծագող «աստղ» Քեւին Կուրանին, որը հանդես է գալիս «Շտուտգարտում», ազգային հավաքականում արդեն առաջին ուսումնամարզական հավաքի ժամանակ որոշակի հիմնախնդիրների առջեւ հայտնվեց: Ֆուտբոլիստը հավաքական էր եկել «Պումա» ֆիրմայի մարզահագուստով: Եվ ահա, մարզումից առաջ նրան սիրեցին փոխել մարզաշապիկը, քանի որ Գերմանիայի ազգային հավաքականն արդեն 48 տարի խաղում է բացառապես «Ադիդասի» մարզահագուստով, որի համար տարեկան 2,5 մլն եվրո է ստանում: «Ադիդասի» հետ կնքած պայմանագրի ժամկետը լրանում է 2010 թ.: Համեմատության համար նշենք, որ Բրազիլիայի ընտրանին «Նայքի» հետ կնքած 10-ամյա պայմանագրով տարեկան 35 մլն եվրո է ստանում:

Ճիշտ է, «Շտուտգարտի» ֆուտբոլիստը գովազդային պայմանագիր է կնքել «Պումայի» հետ, որը նրան տարեկան 50 հազար եվրո եկամուտ է ապահովում, սակայն, համաձայն Գերմանիայի ֆուտբոլային միության ընդունած օրենքի, հավաքականի խաղացողները պետք է հանդես գան «Ադիդասի» մարզահագուստով: Ինչպես երեւում է, առաջիկա տարիներին գերմանացի չինովնիկները դժվարությունների են հանդիպելու, քանի որ երիտասարդ ֆուտբոլիստներն ավելի հաճախակի նախընտրում են «Նայքի» հանդերձանքը: Ամերիկյան ֆիրման հետզհետե նվաճում է գերմանական շուկան: Վերջին շրջանում հավաքականի 7 անդամներ պայմանագրեր են կնքել հենց այդ ֆիրմայի հետ: Այսպես, Քրիստոֆ Մեսցելդերը «Նայքի» հետ եռամյա պայմանագիր է կնքել, ինչը 22-ամյա ֆուտբոլիստին 450 հազար եվրոյի եկամուտ կապահովի: Կամ էլ Միրոսլավ Կլոզեն, որը տարեկան 150 հազար եվրո է ստանում «Նայքից»: Ի դեմ, հարց է ծագում՝ կարո՞ղ է Կլոզեն երբեւէ հանդես գալ «Բավարիայում», որը պայմանագիր է կնքել «Ադիդասի» հետ: Ֆուտբոլիստի փաստաբանները պնդում են, որ դա հնարավոր է՝ հիշեցնելով, որ Դեյվիդ Բեքհեմը «Մանչեսթր յունայթեդում» խաղում էր «Ադիդասի» մարզակոշիկներով, չնայած անգլիական ակումբի գլխավոր հովանավորը «Նայքն» էր:

Երկու ֆիրմաների մրցակցությունը շարունակվում է: «Նայքը» հիմնականում ընտրում է հեռանկարային եւ արդյունավետ խաղ ցուցադրող ֆուտբոլիստների: Ներկայումս ֆիրման փորձում է պայմանագիր առաջարկել «Մյունխեն-1860» թիմի խաղացող Բենիամին Լաուտին (տարեկան՝ 50 հազար եվրո): Բացի այդ, այս մրցաշրջանում «Նայքը» պայմանագիր է կնքել Դորտմունդի «Բորուսիայի» հետ, որի արդյունքում ակումբը տարեկան 5 մլն եվրո կստանա: «Ադիդասը» եւս փորձում է հետ չմնալ իր հակառակորդից: Պայմանագրեր են կնքվել Տորստեն Ֆրինգսի, Սեբաստիան Կելի, Պաուլ Ֆրայերի հետ: Չպետք է մոռանալ նաեւ, որ «Ադիդասի» հետ տարեկան կես միլիոն եվրոյի պայմանագիր են կնքել անվանի ֆուտբոլիստներ Օլիվեր Կանն ու Միխայիլ Բալլակը: Սակայն փորձագետների կարծիքով, «Ադիդասը» զիջում է իր դիրքերը: Օրինակ, 2002 թ. ֆուտբոլի աշխարհի առաջնությունում գերմանացիները միայն 50 մլն եվրոյի ներդրում էին կատարել, մինչդեռ ամերիկացիների գումարը կրկնակի չափով ավելի էր: Բացի այդ, ավելի հաճախակի են Գերմանիայի հավաքականի ֆուտբոլիստների դժգոհությունները, որոնք ցանկանում են հանդես գալ այն ֆիրմայի մարզահագուստով, որի հետ անձնական պայմանագրեր են կնքել: Անգլիայում, Իտալիայում, Արգենտինայում դա թույլատրվում է:

Հայաստանն ու Ուկրաինան կրկին նույն խմբում են

Խոսքն այս անգամ ոչ թե հավաքականների մասին է, այլեւ չեմպիոնների: Մոսկվայում անցկացված ԱՊՀ երկրների չեմպիոնների գավաթի խաղարկության մասնակիցների վիճակահանության արդյունքներով Հայաստանի եւ Ուկրաինայի չեմպիոններն ընդգրկվել են միեւնույն «C» խմբում: Նրանց մրցակիցները կլինեն նաեւ Էստոնիայի եւ Թուրքմենստանի չեմպիոնները: Տեղեկացնենք, որ չեմպիոնների գավաթի մրցաշարը կանցկացվի 2004 թ. հունվարի 17-25-ը Մոսկվայում: «A» խմբում հանդես կգան Ռուսաստանի, Բելառուսի, Ուզբեկստանի, Տաջիկստանի չեմպիոնները: «B» խմբում մրցավեճի կբռնվեն Լատվիայի, Վրաստանի, Ղազախստանի եւ Ղրղզստանի ուժեղագույն ակումբները: «D» խմբում պայքարի մեջ կներգրավվեն Մոլդովայի, Լատվիայի, Ադրբեջանի չեմպիոնները եւ Ռուսաստանի երիտասարդական հավաքականը: Վերջինս հանդես է գալու հաստատակից դուրս:

Ալոյը ստիպված էր խզել պայմանագիրն ակումբի հետ

Անգլիական «Աստոն Վիլայի» ղեկավարությունն ու թուրք պաշտպան Ալոյը փոխադարձ համաձայնության են եկել պայմանագրի վաղաժամ դադարեցման վերաբերյալ: Պատճառն այն է, որ Ալոյը վերջերս կայացած Թուրքիա-Անգլիա ընկերական մրցախաղի ժամանակ վիճաբանության մեջ էր մտել անգլիացիների առաջատար Դեյվիդ Բեքհեմի հետ: Այդ կոնֆլիկտը լայն արձագանք էր գտել բրիտանական մամուլում, որտեղ Ալոյը խիստ քննադատության էր արժանացել: Նման մթնոլորտում «Աստոն Վիլայի» ղեկավարությունը նոպատակահարմար չի գտնում Ալոյի հետագա ելույթները թիմի կազմում: Ուստի ակումբի նախագահ Դագ Էլիսը վճռեց, որ անհրաժեշտ է ֆուտբոլիստի հետ պայմանագիրը ժամկետից շուտ չեղյալ համարել: Այն նախատեսված էր մինչեւ 2004 թ. ամառը: Իսկ Ալոյով արդեն հետաքրքրվում են Բեռլինի «Հերտան» եւ Ստամբուլի «Գալաթասարայը»:

Երեք Տիգրան եւ մեկ Արա ստացան միջազգային տիտղոսներ

Գագիկ Հովհաննիսյանը հաղորդում է Հունաստանից

Ռեպորտաժ Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի եւ «Ավստրիական ավիաուղիների» աջակցությամբ

Այս օրերին երկրագնդի շախմատային մայրաքաղաքը Սալոնիկից 80 կմ հեռու գտնվող հունական փոքրիկ Հալկիդիկի բնակավայրն է: Անմիջապես ծովափին տեղավորված «Էգեյան» հյուրանոցում երեքշաբթի իր աշխատանքներն սկսեց շախմատի համաշխարհային ֆեդերացիայի 74-րդ կոնգրեսը, իսկ 500 մետր այն կողմ, «Պալինի» եւ «Աթոս» հյուրանոցների հսկայական սրահներում շարունակվում են աշխարհի պատանիների եւ աղջիկների առաջնությունները:

Նախ՝ ՖԻԴԵ-ի կոնգրեսի մասին, մանավանդ որ նրա առաջին օրը բերքառատ էր Հայաստանի համար: Արա Մինասյանը եւ Տիգրան Նալբանդյանն արժանացան գրոսմայստերի, իսկ Տիգրան Քոթանջյանը եւ Տիգրան Լ. Պետրոսյանը՝ միջազգային վարպետի տիտղոսների: Գործող կարգի համաձայն, մեր երկու նորընծա գրոսմայստերների «իրավասություններն» ուժի մեջ կմտնեն այն պահից, երբ նրանց վարկանիշները կհասնեն 2500-ի սահմանագիծը: Բայց այդ փոքրիկ պայմանականություններն էլ կհաղթահարվեն: Այնպես որ, օրինակ, գյումրեցիներին կարելի է շնորհավորել, որ նրանք ի դեմս Արա Մինասյանի, իրենց քաղաքում ունեցան անդրանիկ գրոսմայստերը: Արան, ի դեմ, Հայաստանում երեւանից դուրս առաջին շախմատիստն է, որին շնորհվում է այս բարձր կոչումը: Մինասյանը երդվել է, որ կամուսնանա միայն գրոսմայստեր դառնալուց հետո: Այնպես որ, պատրաստվե՛ք, պոտենցիալ հարսնացուներ:

Մեր մյուս անվանակոչիկները կրում են աշխարհում, թերեւս, ամենաշախմատային անունը՝ Տիգրան: ՖԻԴԵ-ի որակավորման հանձնաժողովի նախագահ Ֆինն Միկո Մարկուլան դիմելով ինձ, ժպտալով ասաց. «Ես գիտեմ, որ հայերիդ մոտ Տիգրանն անունն է, այլ ոչ ազգանուն: Բայց կարող է պատահել, որ այս երեք շախմատիստներն ազգականներ են... Ի դեմ, Մարկուլան, միջազգային կոչման ներկայացնելով մեր պատանի շախմատիստ Տիգրան Պետրոսյանին, կատակով ասաց, որ նման անուն ազգանուն կրող մարդուն տիտղոս պետք է շնորհել միանգամից, առանց որեւէ քննարկման»:

Շնորհավորանքներ կարող են ընդունել նաեւ արտերկրում բնակվող մեր երկու պատանի հայրենակիցները: Ռուսաստանցի Սերգեյ Գրիգորյանցը ստացավ գրոսմայստերի, իսկ Ուկրաինայում բնակվող Եվգենյա Դոլուխանովան՝ միջազգային վարպետի կոչում:

Տեղափոխվելով այն մրցաարահներ, որտեղ ելույթ են ունենում աշխարհի ուժեղագույն պատանի շախմատիստները, ընդգծենք, որ Հայաստանը ներկայացված է աննախադեպ մեծ պատվիրակությամբ՝ 16 տղաներ ու աղջիկներ եւ չորս մարզիչներ: Տպավորիչ է նաեւ մասնակիցների ընդհանուր թիվը՝ աշխարհի 85 երկրներից ժամանել են մոտ 900 շախմատիստներ:

Այն պահին, երբ հաղորդվում են այս տողերը, ընթանում է վեցերորդ տուրը, որով ավարտվում է մրցաշարի առաջին կեսը եւ սկսվում է երկրորդը: Հինգ տուրից հետո գովասանքի խոսքեր պետք է ասել մեր տղաներին, որոնք բոլոր տարիքային խմբերում (10, 12, 14, 16, 18 տարեկաններ) առաջատարների մեջ են: Հիանալի է ելույթ ունենում ամենապավագ խմբում հանդես եկող Լեւոն Բաբուջյանը, որը 4,5 միավորով բաժանում է 2-րդ-3-րդ տեղերը: Շատ վստահ են խաղում նաեւ ամենափոքրիկները՝ 10 տարեկանները: Գրիգոր Դիլանյանը, Ռուբեն Գաբրջյանը, Հայկ Թամազյանն ունեն 4-ական, իսկ Եվրոպայի չեմպիոն Սամվել Տեր-Սահակյանը՝ 3,5 միավոր: 12 տարեկանների մեջ մրցանակային տեղեր գրավելու հնարավորություններ ունեն Ռոբերտ Հովհաննիսյանը (4 միավոր), Հրայր Սիմոնյանը (3,5): 14-ամյա Զավեն Անդրեասյանը եւ 16-ամյա Տիգրան Մամիկոնյանը նույնպես վաստակել են 3,5-ական միավոր:

Աղջիկներն առայժմ նկատելիորեն զիջում են պատանիներին: Միայն 10-ամյա Լուսինե Թորոսյանն է, որ 3 միավորով ընթանում է աղյուսակի առաջին կեսում:

Կրամնիկն ու Անանդը մտան հաջորդ փուլ

Ֆրանսիական Կաղ դ'Ազուր քաղաքում շարունակվում է արագ շախմատի աշխարհի անդրանիկ առաջնությունը: Նախնական փուլի հանդիպումներից հետո 8 շախմատիստ իրավունք էր ստացել պայքարելու գլխավոր մրցանակի համար: Հայտնի դարձան կիսաեզրափակիչ մրցախաղերի առաջին մասնակիցները: Վլադիմիր Կրամնիկը 3 պարտիայից բաղկացած մրցախաղում 1,5-0,5 հաշվով պարտության մատնեց Հուդիթ Պոլգարին: Առաջին պարտիայում, որում սպիտակներով խաղում էր Կրամնիկը, ռուս շախմատիստն առավելության հասավ, իսկ սեւերով ոչ-ոքի արդյունք գրանցվեց:

Կիսաեզրափակիչի ուղեգիր նվաճեց նաեւ այս մրցաշարի հաղթողի հավակնորդներից մեկը՝ հնդիկ գրոսմայստեր Վիշվանաթան Անանդը, որը նույն հաշվով պարտության մատնեց ՖԻԴԵ-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Ռուսլան Պոնոմարյովին: Կիսաեզրափակիչի մյուս երկու մասնակիցները հայտնի կդառնան Պյոտր Սվիդլեր-Ալեքսանդր Գրիշչուկ եւ Վեսելին Թոփալով-Էյտեն Բարոն մրցախաղերում:

Վնասվածքը խանգարեց Նալբանդյանին

Արգենտինահայ թենիսիստ Դավիթ Նալբանդյանն էլ մասնակցում էր Բազելի միջազգային մրցաշարին: Դավիթն էլ հաջողությամբ հաղթահարեց նախնական փուլերի արգելքները: Կիսաեզրափակիչում հաղթելով ամերիկացի էնդի Ռոդիկին (7-5, 7-5), Նալբանդյանը մտավ եզրափակիչ, որտեղ ուժերը պետք է չափեր արգենտինացի Գիլյերմո Կորեայի հետ: Վերջինս եզրափակիչի ուղեգիր էր նվաճել՝ պարտության մատնելով խորվաթ Իվան Լյուբիչիչին (6-4, 6-4): Սակայն եզրափակիչ հանդիպումն այդպես էլ չկայացավ: Դավիթը վնասվածքի հետեւանքով չկարողացավ կորտ դուրս գալ: Վնասվածքի պատճառով նա չի մասնակցի Փարիզի մրցաշարին: Թենիսիստների դասակարգման ցուցակում ներկայում Դավիթ Նալբանդյանը 8-րդ տեղում է: Իսկ ցուցակը գլխավորում է իսպանացի Խուան Կառլոս Ֆերերոն (826 միավոր): 2-րդ եւ 3-րդ տեղերում են ամերիկացի էնդի Ռոդիկը (822 միավոր) եւ զվեյցարացի Ռոջե Ֆեդերերը (700):

Թոդ Վուդբրիջը կրկնեց ռեկորդային ցուցանիշը

Ստոկհոլմում ավարտված թենիսի միջազգային մրցաշարում զուգախաղում հաջողությունն ուղեկցեց Թոդ Վուդբրիջ-Յոնաս Բյորկման զույգին, որը պարտության մատնեց Ուեյն Արթուր-Փոլ Հենլի երկյակին (6-3, 6-4): Ավստրալիացի հանրահայտ թենիսիստ Թոդ Վուդբրիջն այսպիսով զուգախաղում իր 78-րդ տիտղոսը նվաճեց՝ կրկնելով հոլանդացի Թոմ Օկկերի ռեկորդային արդյունքը: Վուդբրիջը հույս ունի, որ Փարիզի մրցաշարում ինքը կկարողանա գերազանցել ռեկորդը: Հիշեցնենք, որ Վուդբրիջն այդ հաղթանակներից մեծ մասը տոնել է իր մտերիմ ընկեր ու հայրենակից Մարկ Վուդֆորդի ընկերակցությամբ: Երբ վերջինս հրաժեշտ տվեց թենիսին, Վուդբրիջը որպես խաղընկեր ընտրեց Բյորկմանին:

Էջը պատրաստեց
ԱՍՏՈՒՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքով

ԲԱՔՈՒ

Իլհամ Ալիեւը դարձավ չորրորդ նախագահը Ադրբեջանի պատմության մեջ

ԲԱՔՈՒ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իլհամ Հեյդարովլի Ալիեւը դարձավ չորրորդ նախագահը Ադրբեջանի պատմության մեջ: Նա ծնվել է 1961 թվականի դեկտեմբերի 24-ին Բաքվում: 1982 թվականին ավարտել է Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը, իսկ 1985 թվականին՝ ասպիրանտուրան: Պատմական գիտությունների թեկնածու է: 1985-90 թվականներին դասավանդել է վերը նշված ինստիտուտում: 1991-94 թվականներին եղել է Մոսկվայի «Օրիենտ» ընկերության գլխավոր տնօրենը:

1994 թվականին նշանակվել է Ադրբեջանի պետական նավթընկերության փոխնախագահ, իսկ 1993 թվականին՝ առաջին փոխնախագահ: 2003 թվականի օգոստոսի 4-ին դարձել է վարչապետ:

Խորհրդարանի երկու գումարման պատգամավոր է եղել: 1997 թվականից Ազգային օլիմպիական կոմիտեի նախագահն է:

1999 թվականին «Ենի Ազերբայջան» կառավարող կուսակցության առաջին համագումարում ընտրվել է կուսակցության փոխնախագահ, իսկ 2001 թվականին՝ առաջին փոխնախագահ:

2001 թվականին նշանակվել է Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովում /ԵԽԽՎ/ Ադրբեջանի Միլի մեջլիսի մշտական պատվիրակության ղեկավար: 2003 թվականի հունվարին ընտրվել է ԵԽԽՎ-ի փոխնախագահ եւ բյուրոյի անդամ:

Իլհամ Ալիեւը տիրապետում է ռուսերենին, անգլերենին, ֆրանսերենին եւ թուրքերենին: Ամուսնացած է, ունի երկու դուստր եւ մի տղա:

ԵՂԱՆԱԿ

Կցրտի

ԵՐԵՎԱՆ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստանի տարածքում հոկտեմբերի 29-30-ը կլինեն տեղումներ, լեռնային առանձին շրջաններում՝ նույնիսկ ձյան տեսքով, հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 3-ը սպասվում է հիմնականում առանց տեղումների եղանակ:

Ինչպես հայտնեց «Հայհիդրոմետ» վարչության օդերեւութաբանական կանխատեսումների բաժնի պետ Զարուհի Պետրոսյանը, հոկտեմբերի 29-30-ը օդի ջերմաստիճանը կնվազի 9-14 աստիճանով, իսկ հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 3-ը նույնքան կբարձրանա:

Հայաստանի միսը անորակ է

ԵՐԵՎԱՆ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ՀՀ կառավարությունը եւ Գյուղատնտեսության նախարարությունը 2004թ.-ին ուշադրություն են դարձնելու Հայաստանում արտադրվող սննդամթերքների որակական չափանիշների համապատասխանեցմանը միջազգային ստանդարտներին: Այս մասին հոկտեմբերի 28-ին Հայկական Գյուղատնտեսական Ակադեմիայում լրագրողներին հայտնեց ՀՀ գյուղատնտեսության նախարար Դավիթ Լոիյանը: Նա մասնավորապես նշեց, որ ներկայումս հանրապետությունում արտադրվող մսի որակը չի համապատասխանում միջազգային չափանիշներին: Այդ բացը լրացնելու նպատակով ձեռք են բերվելու ժամանակակից լաբորատոր սարքավորումներ, կատարվելու են կենդանիների պատվաստումներ եւ մի շարք այլ միջոցառումներ:

ՀԱՍԱՌՈՏ

Ուժեղ բռնկում Արեգակի վրա

ՄՈՍԿՎԱ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանի կիրառական երկրաֆիզիկայի ինստիտուտի գիտնականներն այսօր շաս ուժեղ բռնկում են արձանագրել Արեգակի վրա: Առաջիկա երեք օրերին այն կարող է հանգեցնել «երկրագնդի գեոմագնիսական դաշտի, ռադիացիոն իրավիճակի զգալի փոփոխությունների, ինչպես նաեւ ռադիոկապի համակարգերի աշխատանքի խանգարումների»: Բռնկումը գրանցվել է Մոսկվայի ժամանակով ժամը 14:10-ին: Դա արեգակնային տիեզերական ճառագայթների պրոտոնների հզոր հոսքեր է հարուցել:

Արյան նոր բարձրակարգ փոխարինիչ

ԲՈՍՏՈՆԻՆ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հունգարացի հետազոտող Իշվան Խորվաթը մշակիր է մոտ ժամանակներս արտնագրել արյան արհեստական փոխարինիչի նոր տեսակ: Նրա գյուտն արժանացել է արտասահմանցի մասնագետների բարձր գնահատականին: Պատրաստուկը պիտանի է արյան որեւէ խումբ ունեցող մարդկանց համար, կարող է պահվել երկար ժամանակ, նրա կիրառումը չի հանգեցնում նյութափոխանակության խանգարումների, բացառված է վարակի փոխանցման վտանգը:

ԿԺԴՀ-ն 400 բալիստիկ հրթիռ է վաճառել մերձավորարեւելյան երկրներին

Հյուսիսային Կորեան վերջին 15 տարում տարբեր հեռահարության 400-ից ավելի բալիստիկ հրթիռներ է վաճառել Մերձավոր Արեւելքի երկրներին, բայց անցյալ տարի այդ կարգի զինամթերքարտադրությունները հասել են առանձնապես մեծ ծավալների: Ըստ World Tribune ինտերնետային հրատարակության, Հարավային Կորեայի պաշտպանության նախարարն այդ տվյալներն է բերել երկրի խորհրդարանին իր ներկայացրած զեկուցագրում:

Փաստաթղթում նշվում է, որ հրթիռների եւ դրանց բաղադրիչների ամենամեծ խմբաքանակներն առաքվել են Իրան, Սիրիա եւ Եմեն: Այդ ամենի վաճառից հյուսիսկորեացիներն ստացել են 100 մլն դոլար:

Մերձավոր Արեւելքի երկրները 2002 թ. ԿԺԴՀ-ին ավելի քան 60 մլն դոլար են վճարել «Սկադ» հրթիռների դիմաց, մինչդեռ 2001 թ. համանման զինատեսակների առաքման դիմաց վճարել էին 20 միլիոնից ոչ ավելի:

Պտաստվում է, որ այս տարի Հյուսիսային Կորեան հրթռային տեխնոլոգիաների վաճառքից ավելի մեծ շահույթ կստանա, քան անցյալ տարի: Հիշյալ զեկուցագրի տվյալների համաձայն, զենքի գլխավոր գնորդն Իրանն է: Թեհրանը Փենյանից գնում է ոչ միայն «Սկադ» հրթիռներ, այլեւ միջին հեռահարության «Նո Դոնգ» բալիստիկ հրթիռներ:

Ամերիկացիներին խորհուրդ չի տրվում մեկնել Արաբիա եւ Պարսից ծոց

ԱՄՆ Պետդեպարտամենտը երեկ տարածել է հայտարարություն, որով ամերիկացիներին խորհուրդ է տրվում ձեռնպահ մնալ Սաուդյան Արաբիա եւ Պարսից ծոցի տարածաշրջան մեկնելուց: Փաստաթղթում նշվում է, որ Սաուդյան Արաբիայում ահաբեկիչները կարող են հարվածել «Արեւմուտքի ավիացիոն շահերին»: Այդ եզրակացությունը հիմնված են «հուսալի տեղեկատվության» վրա:

Պետդեպարտամենտը հայտարարել է, որ ԱՄՆ կառավարությունը «շարունակ տեղեկություններ է ստանում ահաբեկչությունների սպառնալիքների վերաբերյալ, ներառյալ հնարավոր հարվածները քաղաքացիական օդանավերին»: Այս կապակցությամբ Ֆրանսպորտ գործակալությունը հաղորդում է, որ 2001 թ. մինչ օրս Սաուդյան Արաբիան 17,6 մլն դոլար է ծախսել ԱՄՆ-ի աչքին իր նկարագիրը բարելավելու նպատակով:

Սաուդյան իշխանություններն այդ քայլին դիմել են 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչություններից հետո: Այն ժամանակ ԱՄՆ իշխանությունները հայտարարել էին, որ Նյու Յորքի եւ Վաշինգտոնի 19 օդահենքներից 15-ը Սաուդյան Արաբիայի քաղաքացիներ են:

Սաուդցիների ինքնարդարացմանն ուղղված միջոցներով 2002 թ. մայիսին գովազդային արշավներ ծավալվեցին ամերիկյան CNN, ESPN, MSNBC եւ Fox News հեռուստաընկերություններով: Գովազդային այդ հոլովակներում սաուդցիները ներկայանում էին որպես ժամանակակից ազգ, որի շահերը համընկնում են ամերիկացիների շահերին:

Պ. Ք.

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԲ խորհրդի նիստում

ԿԲ խորհուրդը հոկտեմբերի 27-ի արտագնա նիստում, որը վարում էր բանկի նախագահ Տ. Սարգսյանը, որոշեց գրանցել «Հայխնայբանկ» ՓԲԸ-ի թիվ 60 մասնաճյուղը՝ ք. Արտաշատ, Մարքսի 21/14 հասցեով, արտարժույթի առք ու վաճառքի լիցենզիա տրամադրել անհատ ձեռնարկատեր Սամվել Սուլյանին, ինչպես նաեւ թույլտվություն տալ «Կապիտալ ինվեստ» ՍՊԸ արտարժույթի փոխանակման կետին այլ վայրում եւս արտարժույթի առք ու վաճառք իրականացնել:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

Հայաստանի ամերիկյան համալսարանի
Հատուկ դասընթացների բաժին

Հայաստանի իրական օրենսդրության խնդիրները եւ սկզբունքները

Դասընթացում հոդված առ հոդված կքննարկվի Հայաստանի իրական օրենսդրությունը:

Տեւողությունը՝ 2003.11.03-ից մինչեւ 2003.11.24-ը
երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 18:00-20:00

վարձը՝ 15.000 դրամ (ներառյալ ԱԱՀ)

Դասընթացի գրանցման եւ վճարման վերջնաժամկետը՝ 2003 թ. հոկտեմբերի 31, ժամը 16:00

- Դասընթացը կվարի ՀՀ ԱԱՀ ֆինչական վարչության պահեստի փոխգնդապետ **Վահան Հովհաննիսյանը**
- Դասընթացում կընդգրկվեն նվազագույնը 15 գրանցվածները
- Վճարման եւ գրանցման համար դիմել ՀԱՀ-ի 19ա սենյակ, ժամը 9:00-ից մինչեւ 17:45

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ 51-27-06

E-mail: extension@aua.am: http://www.aua.am

ՄՐՑՈՒՅԹԻ ԾՐԱԳԻՐ

Երեւանի քաղաքապետարանը հայտարարում է Երեւանի Հանրապետության հրապարակում Լենինի նախկին հուշարձանի տարածքի ճարտարապետական կազմակերպման առաջարկների բաց մրցույթ:

Ներկայացվող առաջարկներն իրենց գաղափարական եւ ծավալատարածական հորինվածքով պետք է օրգանական միասնություն կազմեն Հանրապետության գլխավոր հրապարակի ճարտարապետական համալիրի հետ:

Մրցույթին կարող են մասնակցել բոլոր ցանկացողները:

Ներկայացվող նյութերի կազմն ու ներկայացման ձեւերն ազատ են եւ թողնվում են մասնակիցների հայեցողությանը:

Մրցույթի նյութերը մինչեւ 2003. թ. դեկտեմբերի 15-ը, ժամը 17:00-ին ներկայացնել Հայաստանի ճարտարապետների տուն՝ Մարշալ Բաղրամյան 17, հասարակական ֆոնարկում կազմակերպելու նպատակով:

ARMENTEL

Հայտարարություն

«Արմենտելը» հայտարարում է մրցույթ տրանսպորտի վարչության վարորդի աշխատատեղի համար:

Մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ունենան B,C, E կարգի վարորդական իրավունք:

Մրցույթին մասնակցել ցանկացողները մինչեւ նոյեմբերի 15-ը կարող են անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել «Արմենտելի» կադրերի վարչություն:

Հասցեն՝ Երեւան, Սիսակյան 2, 6-րդ հարկ, 612 սենյակ:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կենտրոնական բանկը 29.10.2003 թ. ժ. 9:00-ից սահմանում է արտարժույթի հետեւյալ հաշվարկային փոխարժեքները ու գնման եւ վաճառքի հետեւյալ գները

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Հաշվարկային փոխարժեք	Գնում	Վաճառք
USD	1	ԱՄՆ դոլար	558.34	552.80	563.90
EUR	1	եվրո	651.75	647.80	655.70
RUR	1	ռուս. ռուբլի	18.65	17.50	19.80

For Your Internal News of Armenia Log on to
www.azg.am
In Armenian Russian, English, and Turkish

Գովազդի համար զանգահարել՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 28. 10. 2003 Գինը՝ 100 դրամ